


ԱՆԱ ԱՐԵՎԱՏՅԱՆ

Համամ Արևելցուն վերագրվող
«Համառօտ յերաժշտական
արուեստէ ի յարապ գրոց» երկը



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍԻՏՈՒՏԸ

ԱՆԱ ԱՐԵՎԵՏԱՏՅԱՆ

ՀԱՍԱՍ ԱՐԵՎԵԼՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ
«ՀԱՄԱԴՕՏ ՅԵՐԱԺԵՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՔ.
Ի ՅԱՐԱՊ ԳՐՈՑ» ԵՐԿԸ

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ИСКУССТВ

АННА АРЕВШАТЯН

СОЧИНЕНИЕ «КРАТКИЕ ИЗВЛЕЧЕНИЯ ИЗ
АРАБСКИХ КНИГ
О МУЗЫКАЛЬНОМ ИСКУССТВЕ»,
ПРИПИСЫВАЕМОЕ АМАМУ АРЕВЕЛЦИ

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
2021

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA
INSTITUTE OF ARTS

ANNA AREVSHATYAN

THE TREATISE “BRIEF EXTRACTS FROM
ARABIC BOOKS ON MUSICAL ART”
ATTRIBUTED TO HAMAM AREWELC‘I

YEREVAN
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2021

ՀՏԴ 78.072

ԳՄԴ 85.313

Ա 865

Տպագրվում է ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գիտական խմբագիր՝

արվեստագիտության դոկտոր՝ Լևոն Հակոբյան (Մոսկվա)

Գրախոսներ՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Լիլիթ Երնջակյան

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Սիեր Նավոյան

Արևշատյան Աննա

Ա 865 Համամ Արևելցուն վերագրվող «Համառոտ յերաժշտական արուեստէ. ի յարապ զրոց» երկը / Ա. Արևշատյան. – Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021.- 99 էջ:

Ուսումնասիրությունը նվիրված է IX դարի մատենագիր Համամ Արևելցուն վերագրվող «Համառոտ յերաժշտական արուեստէ. ի յարապ զրոց» երաժշտագեղագիտական երկասիրությանը: Բնագիրը ուշագրավ է նրանում արծարված անտիկ և եելյենիստական ժամանակաշրջաններում, ինչպես նաև միջնադարում լայնորեն շրջանառվող երաժշտական գեղագիտությանը բնորոշ մի շարք տեսությունների և ուսմունքների ուսումնասիրության առումով: Համամ Արևելցուն վերագրված սույն բնագիրը առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ՝ բազմակողմանի երաժշտատեսական քննությամբ: Գիրքը նախատեսված է երաժշտագետների, հայ-արաբական միջնադարյան մշակութային փոխառնչությունների ուսումնասիրությամբ եւտաքրքրվողների և երաժշտական բուհերի ուսանողների համար:

ՀՏԴ 78.072

ԳՄԴ 85.313

ISBN 978-5-8080-1446-6

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021

ՀԱՍՏԱՏ ԱՐԵՎԵԼՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ
«ՀԱՍՄԱՌՈՅ ՅԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԵ»
Ի ՑԱՐԱՊ ԳՐՈՑ» ԵՐԿԸ

Համամ Արևելցին (†898 թ.), ով սերում էր Բագրատունիների տոհմից, հայ միջնադարյան աղբյուրներում հիշատակվել է բազմիցս: Նա մտել է դարաշրջանի գրականության մեջ իր ապաշխարության շարականով և մի շարք մեկնողական երկերով, որոնց մի մասը չի պահպանվել: Տարբեր պատմական աղբյուրներից հայտնի է, որ Համամ Արևելցու կյանքը եղել է բավական փոքրկալից, զանազան հուզումնալի դրվագներով լի և դրանցից ամենադրամատիկի տպավորության տակ նա գրել է «Հայր երկնաւոր» խոսքերով սկսվող շարականը: Նրա կյանքին և գրական ժառանգությանը անցյալը անդրադարձել է բազմավաստակ հայագետ Կարապետ Կոստանդիանը, որն իրեն հատուկ գիտական նախանձախնդրությամբ քննել է Համամ Արևելցուն վերաբերող բոլոր հասանելի աղբյուրները և սեփական դիտարկումների հիման վրա արել ուշագրավ եղակացություններ¹:

¹Տես Կոստանդիանց 1896:

Հայ երաժշտական միջնադարագիտության մեջ Համամ Արևելցին մինչ այժմ դիտարկվել է որպես երկրորդական մի հեղինակ, որն առանձնապես ոչնչով աչքի չի ընկել, եթե չհաշվենք վերոնշյալ միակ շարականը և «Մեկնութիւն քերականին» երկը: Սակայն նրա գրական ժառանգությանը ի մոտո ծանոթանալիս, մեր ուշադրությունը գրավեց մի գրվածք, որը թեև ժամանակին հրապարկվել է միսիթարյան հայրերի կողմից², այնուհանդերձ, դուրս է մնացել հայ երաժշտագետ-միջնադարագետների տեսադաշտից:

Նախ հիշեցնեմ, թե ինչպես են գնահատել Համամ Արևելցուն մեր միջնադարի պատմիչները.

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի (XII դ.). «Եւ Համամ Արևելցի որ զվերլուծութիւն Առակացն. և Յովբայ զՈՎ է դայն թարգմանեաց, և զօրինութիւնս, որ ի գլուխս Սաղմոսացն ասացեալ, զիրս մի. և զԱնքիծնն զիրս մի, և վերլուծութիւն քերականին» գրեաց, եւ վերլուծութիւն քերականին...»³.

Միսիթար Այրիվանեցին (XIII դ.) «Համամ, որ և Յովիաննէս Բազրատունի, մեկնեաց զԱ-

²Տես «Բազմավեպ», 1875, թիւ Դ, էջ 358–366:

³Տես Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի 1859, էջ 145:

ոական և եղ զվերջի գոբղայսն ի գլուխ Սադ-
մոսացն»⁴:

Վարդան Արևելցի (XIII դ.) «...զրեաց մեկ-
նութիւն Առակացն եւ քերականին»⁵:

Հովհաննես Վանական Տավուշեցի (XIII դ.),
«Հարցմունք եւ Պատասխանիք». «Հց. Ո՞վ է Հա-
մամն՝ Առակաց մեկնիչն. Պտ. Բագրատու-
նեաց իմաստասէր աբեղա Յովհաննէս անուն:
Հց. Զի՞նչ արարեալ. Պտ. Զվերջին գոբեղայքդ
նա է կարգել ի սադմոսին վերայ. և զբերականն
մեկնեալ»⁶:

Յաղագս մեկնութեան ալելուիայ ասելոյն.
«<...> եւ ամէն կանոն է. գոբղա է եւ զետին գոբ-
ղայք ի մարզարէիցն առեալ մեծ վարժապետն
հայոց Համամ Յովհաննէս աւծօն թագաւորին
Աշոտոյ Բագրատանց եւ ետ ասել ի վերջ տան
սադմոսացն «Փառք յարութեան քո Տէր»⁷:

Ուշագրավ է Կոմիտաս վարդապէտի գնա-
հատականը, որն առկա է նրա 1914 թ. Փարիզի
Երաժշտական Միջազգային համաժողովում
կարդացած բանախոսության մեջ: Այն նվիր-
ված էր հայ եկեղեցական ու ժողովրդական

⁴ Մխիթար Այրիվանեցի 1862, 55:

⁵ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապէ-
տի 1862:

⁶ ՄՄ, ձեռ. 5611, թ. 110ա:

⁷ Տէ՛ս Մնացականյան 1966, 200:

երաժշտության հատկանիշների բացահայտմանը և օտար երաժշտական մշակույթների ազդեցությանը հայ Եկեղեցական և աշուղական երաժշտության վրա: Հայկական Եկեղեցական երգերի ճշմարիտ ոճի օրինակները ներկայացնելու նպատակով, նա վկայակոչել է մի շարք հայ միջնադարյան մատենագիր հեղինակների, այդ թվում նաև Համամ Արևելցուն, որի մասին գրել է հետևյալը. «Ուրիշ հայ հեղինակ մը, մեծանուն երաժիշտ Համամ Արեւելցին (Ժ. դար), կըսէ՝ «Եկեղեցական երգերը պետք է երգել, ոչ թէ ձգձգուած ձեւով, այլ աշխոյժ կերպով: Պետք չէ ձայնը յանկարծ շատ բարձր հանել կամ շատ ցած իջեցնել, որովհետեւ անիկա կըրնայ աղօթքին վեհութիւնը խանգարել»»⁸:

Կ. Կոստանյանցից հետո 1960-ական թթ. Համամ Արևելցուն անդրադարձավ վաստակաշատ բանասեր Ասատուր Մնացականյանը, ով աղվանական գրականության հարցերին նվիրված իր ուսումնասիրության մեջ շատ բարձր է գնահատել նրան, գրելով. «Իններորդ դարի Աղվանից աշխարհի խոշորագույն մա-

⁸Տե՛ս Կոմիտաս, 2007, 190–191: Ցավոք, ըստ իր սովորության, Կոմիտասը չի նշել, թէ որտեղից է քաղել մեջբերումը:

տենագիր ու քաղաքական գործից Համամ
Բազրատունին, որն առաջին անգամ Հայոց
Աղվանքում հիմնեց հայկական ուրույն թագա-
վորություն»⁹: Մնացականյանը նշել է, որ Հա-
մամ Բազրատունին, որը եղել է IX դարի երկ-
րորդ կեսերին Աղվանից երկրի թագավորը,
միաժամանակ զբաղվում էր զրական աշխա-
տանքով¹⁰: Հմուտ աղբյուրագետը ամենայն
մանրամասնությամբ վերլուծել է Համամ
Արևելցու զրական ժառանգությունը, ուշա-
դրություն հրավիրելով մի հարցի վրա, որը
դուրս է մնացել ուսումնասիրությունից¹¹ (դրա
մասին ստորև):

Համամ Արևելցու մեկնողական երկերին
նվիրված ուշագրավ հոդվածով մի քանի տարի
առաջ հանդես եկավ Շահե ծ. վրդ. Անանյանը¹²,
որն անդրադառնալով Համամ Արևելցու սաղ-
մուերգության կարգավորմանը ուղղված գոր-
ծունեությանը, հանգել է հետևյալ եզրակացու-
թյան. «Փաստորեն, Համամը, եկեղեցական
պաշտամունքը հեշտացնելու նպատակով,
Սաղմոսների ութ կանոններից յուրաքանչյուրի
վերջում դրված այս հինկտակարանյան օրհ-

⁹Նույն տեղում, 194:

¹⁰Նույն տեղում, 183:

¹¹Նույն տեղում, 194:

¹²Տես Անանյան 2009, 49–58:

նությունները զետեղել է մի գրքի մեջ՝ իբրև առանձին միավոր։ Այս կանոնակարգը պահպանվել է Աստվածաշնչի հայերեն ձեռագրերից մեծ մասի մեջ։ Համամը, ըստ Այրիվանեցու վկայության, ամեն սաղմոսի վերջում «Փառք յարութեան քո Տէր» ավելացնելով, դրանք քրիստոնեացնելու փորձ է կատարել, ինչը մինչև օրս կ կիրառվում է Հայաստանեաց եկեղեցու սաղմոսերգության մեջ»¹³։ Իսկ սաղմոսերգության մեջ կատարած Համամ Արևելցու հավելումների կապակցությամբ, հայր Շահեն արդարացիորեն նկատել է, որ՝ «Ձետին գորդայք ի մարգարէիցն առեալ» արտահայտությունը մտածել է տալիս սաղմոսերգության հին ավանդական ձեի, այսինքն՝ Սաղմոսների եւ օրիներգությունների՝ նույն գրքի մեջ միատեղման մասին։ «Մարգարէիցն» արտահայտությունն ակնհայտորեն մատնանշում է մարգարեական գրքերից քաղված այն օրիներգությունները, որոնք վաղ քրիստոնեական պաշտամունքի մաս էին կազմում Սաղմոսների հետ»¹⁴։

Այդ նույն հոդվածում Շահե վարդապետը նշել է մի երկ, որը և գրավեց մեր սևեռուն

¹³ Նույն տեղում, 49:

¹⁴ Նույն տեղում։

ուշադրությունը. «Համամի գրչին որոշ վերապահումներով վերագրված է մի երկ էլ՝ «Համառոտ յերաժշտական արուեստէ ի յարապ զրոց», որը տպագրվել է «Բազմավեպ» հանդեսում՝ ֆրանսերեն համդիապադիր թարգմանությամբ»¹⁵:

Ըստ Շահե ծ. վրդ. Անանյանի հրապարակած ցանկի՝ Համամ Արևելցու երկերն են.

«1. Շարական Համամայ «Հայր երկնաւոր» – հայտնի է մի քանի ձեռագրերով եւ տպագրված Սահակ վրդ. Ամատունու կողմից (էջ 163–164):

2. Մեկնութիւն Քերականին – հրատարակվել է Ն. Աղոնցի նշանավոր երկում՝ իբրեւ Դիոնիսիոս Թրակացու հայերեն մեկնություններից մեկը: Ցավոք, բնագիրը մեզ չի հասել ամբողջական տեսքով»¹⁶:

3. Մեկնութիւն Սաղմոսաց – համարվում է կորած: Մեզ են հասել միայն մի քանի կցկտուր մատենագրական վկայություններ սույն երկի մասին»¹⁷:

4. Մեկնութիւն Անբիծք սաղմոսի – կորած:

5. Մեկնութիւն Ցոքայ «Ո՞վ է դա»-ին. –

¹⁵ Բազմավեպ, 1875, Դ, 358–366:

¹⁶Տե՛ս Ածոնց 1915, 251–285:

¹⁷ Ibid., 253–254:

հրատարակվել է Մատենագիրք Հայոց մատենաշարի թ հատորում՝ երկու ձեռագրային տարբերակներով, Հ. Քյոսեյանի աշխատասիրությամբ¹⁸:

6. Պատմական մի երկ – կորած:

7. Մեկնութիւն Առակացն Սողոմոնի – առաջին անգամ տպագրվել է 1994 թ. Տ. Միհրար քին. Սարիբեկյանի աշխատասիրությամբ, «Աստվածաշնչական մեկնություններ» շարքի մեջ¹⁹:

8. Մեկնութիւն Դիոնիսիոսի Արիսպազացոյ – պահպանված է մեկ ընդօրինակությամբ Փարիզի ազգային գրադարանում, ցարդ՝ անտիպա²⁰:

Դեռևս Կ. Կոստանյանցի հրապարակած ցանկին Ա. Մնացականյանը հավելել է ևս մեկ կետ.

9. Կարգումն Գոբողայից, – նշելով, որ սա ուսումնասիրության կարոտ հարց է, որով ոչ ոք չի զբաղվել²¹:

Այսպիսով, վերոբերյալ ցանկը վկայում է,

¹⁸Տե՛ս Մատենագիրք Հայոց, հ Թ, 2008, 522–533:

¹⁹Ստեփանոս Սիւնեցի, Համամ Արևելցի, 1994:

²⁰Փարիզի ազգային գրադարան, հայկ. ձեռ. 60: Ըստ Ֆր. Մակերի նկարագրության, ունի հետևյալ խորագիրը՝ «Համամ Վարդապետի բան լուծմանց բանից Դիոնիսի»:

²¹Մնացականյան 1966, 194:

որ Համամ Արևելցու գրական ժառանգությունը
բավական պատկառելի ծավալ է ունեցել:

Այժմ անդրադառնանք երաժշտական ար-
վեստի, մասնավորապես, հոգևոր երգարվես-
տի ոլորտին առնչվող Համամ Արևելցու ստեղ-
ծագործություններին:

Նախ անդրադառնամ շարականին: Այդ
շարականը ժամանակին հրատարակել է Սա-
հակ վրդ. Ամատունին իր հայտնի աշխատու-
թյան մեջ²²: Իսկ առաջին անգամ «Հայր Երկ-
նաւոր» շարականի բնագիրը հրատարակել է
Կ. Կոստանյանցը, ով փաստորեն Համամ
Արևելցուն անդրադարձ առաջին հայագետն
էր²³: Նա հղում է Մայր Աթոռի թիվ 1572 ձեռա-
գիր Շարակնոցը²⁴, որի հիշատակարանում
նշված է, թե գրչագիրն ընդօրինակված է 1328թ.
մեկ այլ՝ շատ ընտիր գրչություն ունեցող Շա-
րակնոցից²⁵: Մատենագրական աղբյուրների
տվյալները հավաստում են, որ Համամ Արևել-
ցին հակումներ է ունեցել հոգևոր երգարվեստի
հանդեպ, իսկ նրա անունով պահպանված
«Հայր Երկնաւոր» ապաշխարական շարականը
ենթադրել է տալիս, որ նա կարող էր այլ երա-

²²Տե՛ս Ամատունի 1911, 163–164:

²³Կոստանեանց 1896, 7:

²⁴Ներկայումնա՛ ՍՍ, ձեռ. 1576, Դրագարկ:

²⁵Նույն տեղում:

Ժշտաբանաստեղծական գործեր ևս հեղինակել:

Մեջքերենք վերոնշյալ շարականի բնագիրն ամբողջությամբ.

Շարական Համամայ.

Հայ յր երկնաւոր, անկանիմ առաջի անոխակալ քո գրքութեանդ.

զի մեղաւք իմովք բարկացուցի

և զշար առաջի քո արարի,

աղաչեմ ըզքեզ ը՝ ներեա յանցանաց իմոց,

որ ը՝ միայնդ ես ողորմած:

Արք անաւրէնք կոչեցին զիս հաղորդիլ արեան մահու,

զընացի զճանապարհս ձախակողմեանն.

կատարեցի ըզշար խորհուրդ նոցա.

աղաչե[մ]:

Մեծ են յանցանք իմ, Տէ՛ր, զոր գործեցի յահէ մահու,

իրամանաւ իսմայելեան բըռնաւորին երագեցի հեղուլ զարիսն եղբաւրն.

աղաչեմ ըզքե[զ]:

Աստուած ապաւէն և ըլոյս դարձելոյս ի քեզ,
յարենէ փրկեա զիս Տէր.

որպէս թողեր զայն երգողին,

թող և ինձ ըզպարտըս մեղուցեալ քո ծառայիս.

աղաչե[մ]:

Մեղայ, Տէ՛ք, մեղայ, Մանասէի ձայնիւ գոչեմ,
ընկալ զիս, Մարդասէ՛ք, ընդ երանելեացն,
որոց թողան և ծածկեցան յանցանքն,
աղաչեմ ըզքէ[զ]:

Չեռագրական տվյալները հավաստում են, որ «Շարական Համամայ»-ն միշտ չէ, որ պարականոն է եղել, ունենալով անգամ իր որոշակի տեղը Շարակնոցի կազմում: Սովորաբար այն գետեղվել է Յովնանու մարգարեի վեց պատկերից բաղկացած կանոնից հետո, որը Ներսես Շնորհալու գրչի արգասիքն է: «Հայր երկնաւոր» շարականը առկա է XIII–XV դդ. մի շարք գրչագիր Շարակնոցներում²⁶: Սակայն մոտավորապես XV–XVI դարերում հետզհետե դուրս է մնացել կանոնից: Թէ ո՞ր կաթողիկոսի օրոք և կոնկրետ երբ՝ դժվար է ասել:

Շարականն ամբողջությամբ ապաշխարական տրամադրությամբ է տոգորված: Զըդշման զգացումը կազմում է սույն երգասացության կերպարային հիմքն ու մթնոլորտը: Տար-

²⁶ Տես ՍՍ, ձեռ. 1576, 1577, 1579, 1581, 1582, 1584, 1585, 1587, 1588, 1590, 1591, 1601, 1603:

բեր պատմիչների (Հովհաննես Դասխուրանցի և ուրիշներ) հաղորդած վկայություններից տեղեկանում ենք, որ Բուլղա անունով արաք ոստիկանի հրամանով «մեծ իշխան Արևելից» Համամը ստիպված սպանել է հարազատ եղբորը, ինչից հետո թողել է Խաչենի թագավորության գահն ու գայխոնը և կրոնավորի սքեմ հագել՝ Հովհաննես վարդապետի անունով²⁷: Բնչպես նշել է Կոստանյանցը՝ «Թէ ո՞վ և ի՞նչ հանգամանքների մէջ ստիպեց Համամին սպանել իւր եղբորը, ի՞նչ քաղաքական նշանակութիւն ուներ նորա եղբայրն և ի՞նչ էր նորա անունը, պատմական յիշատակարաններից կարելի չեղաւ մի բան իմանալ: Ակներև է աակայն, որ Համամայ անունով մնացած շարականի բովանդակութիւնն համաձայն է Դասխուրանցու վկայութեանն և հակառակ չէ միւս պատմիչների ցուցումների, ուստի և կարելի է ասել, որ յիշեալ շարականի հեղինակը նոյն ինքն Արևելից մեծ իշխանն է Համամ Արևելցին»²⁸: Տրամաբանական է, որ այդպիսի ոճիր գործած անձը ցանկացել է ապաշխարությամբ քավել իր հանցանքը: Այդ տրամադրությունը նկատելի է նաև նրա մյուս գրվածքներում,

²⁷ Կոստանեանց 1896, 12:

²⁸ Նույն տեղում:

որոնք «Համամի անունով մնացել են և որոնք
մի առ մի կարծես նոյն զղշման, նոյն ծանր ա-
պաշխարութեան գաղափարն են ամփոփում
իրենց մէջ. Սողոմոնի Առակները, ՃԾՀ. Սադ-
մոսը և սաղմոսների վերջին օրինութիւնները
մեծ մատով յիշեցնում են մարդուս մեղանչա-
կանութիւնն և զղշման բարի հետևանքները»²⁹:

Շարականն ունի հինգ տուն. այն կազմված
է անվանական ակրոստիքոսով և հոդում է
հեղինակի անունը ՀԱՍՏԱՄ: Երգասացությունը
գրված է ազատ հանգով կամ չափաբերված
արձակով, ինչը, կարծես, հիշեցնել է տալիս
Մաշտոցի ապաշխարության շարականների
հանգն ու ոճը: Զուգահեռներ կարելի է նկատել
նաև բանաստեղծական-կերպարային ոլոր-
տում, ինչը վկայում է այն մասին, որ հեղինակը
քաջածանոթ է եղել ազգային շարականեր-
գության աստվածաշնչական հիմնական կեր-
պարային արտահայտչականությանն ու բա-
ռապաշարին: Ուշագրավ դիտարկում է արել
տվյալ շարականի կապակցությամբ Ա. Մնա-
ցականյանը, գրելով. «Էա հայկական հին
քնարերգության մի եզակի նմուշ է, իր տեսակի
մեջ միակը՝ մեր ողջ չափածո խոսքի անդաս-
տանում: Այն որքան հոգևոր է, նույնքան էլ

²⁹Նույն տեղում, 12–13:

աշխարհիկ բնույթ ունի³⁰, կարծես, հուշելով
ընթերցողին, որ գուցե երգասացությունը ի
սկզբանէ աշխարհիկ է եղել, իր զգացմունքային
անձնական ապրումի գորեղ արտահայտու-
թյամբ և հենց դրա համար էլ հետագայում
դուրս է մղվել կանոնից: «Դավթակ Քերթողի
Ողբից հետո Համամ Արևելցու Շարականը մեր
հին քնարերգության հաջորդ աշխարհիկ
ստեղծագործությունն է»³¹:

Այս գնահատականը կարելի է ընդունել
որոշ վերապահումով միայն: Եվ ահա թե ինչու:
Նշեմ, որ շարականի երաժշտական բաղադրի-
չով առ այսօր ոչ ոք չի զբաղվել: Այնինչ ինչպես
ցույց տվեց ուսումնասիրությունը, մի շարք ձե-
ռագիր Շարակնոցներում այն օժտված է բա-
վական մանրանասն, երբեմն նույնիսկ ճոխ
խազագրությամբ: Դա վկայում է այն մասին, որ
շարականը ժամանակին անկասկած երգվել է,
ինչի ապացույց է նաև «ը՝» հնչյունը, որը մի
քանի անգամ հանդիպում է շարականի տողե-
րում:

Մեզ հայտնի ձեռագրերից ոչ մեկում տվյալ
շարականի ձայնեղանակը նշված չէ, սակայն
Սահակ վրդ. Ամատունին իր պարականոն

³⁰ Անացականյան 1966, 194:

³¹ Նույն տեղում, 195:

Հական նոցին ապա շխարուք մինչ :
Ելեն եկան են երեք ասրեայ թաղմանի
պահեղով և եւ դանի ծանրինակի թաղման
անդու կը արու թեա : Ի՞նչ է եզր և զի և
զմեղուք ընթառեալու : Երբ ապա ճայնի
աղաւ թիւ . երկու տասնա թիւ ու այս և ման
կանց տուղայու ծց ներանց գործածեւ եր
կայնամի : Ի՞նչ ուրուց մանձորկա

որ ամսատ գեղ :

պաշխարութիւ ապօք եցաւ բաղա
բան ինու եացու ու կը սեղ այնի մարգա
ի , ու են երեւ թողութիւ մեղաց :
Ե համաննա առ թակմա ու որն պայտու ու
տույր ժողով զոր եանն . զնել այնիմ :
Ի բերանոց մանկանց տուղայու զար
բա յներ կնիւ յասգնու մի կոչեին . լու :
Ապա կան համանայ :

այրեց են մեռ անկան իմ առաջի
աստիսական բու գը թու մենք զի մեջ
առ իմով բարեկաց ու ու և զարաւագի
բու ամսորի . առ մաւ եմ օքքե զ ընեմ ու սի
ու այս անցանամ զի : Շամ մուզ ու ըստ
ամ յն քիւ : Մու յա զում ու ամ ըստմ :

ԱԱ, ձեռ. 1576: Դրազարկ, թ. 53թ.:

Ա թիվանաբուժն է հունական համար
 շորով լաւ. ընանախն ու զանացի ըզդին
 հասպատ հաճախանեղան մենան. Կայութարե
 ցի ըզդանան. ոհութան նոցա աղամազ
 Ա եց ենցանցանք իմ մտք զորգործեցին
 յա. հետ մահու. հրամանացի իմ մայել
 ան բընուանի ին ն. Եղադեցի հեղող զա
 ռիւնեղբարեն. աղամազ մըցքէ
 Ա ծական են և ըլու յա գար ձեղոյսին
 քել յարեն ի ըրկեա զիմոր. զրուտ և
 ժաղերզայն ենդուղին. ընդեկն ա ըլպար
 տըւմ եղորչեալ բու ծառանցին. աղամազ
 Ա եցա ա յարմելյա մանամեն հայ
 սիւ գորչեն ընկայ զիմորուա ակր. ընդ
 երամեն են ցողոց թողան և ծածկեն
 զան յանցանքն. աղամազ մըցքէ

Զ առացաւ զարդարոց զբան ջ ռաբօւնին
 պկարապետ մարզապետն որկրկեն զարդարու
 և ու զարապենոց ու ուկով և ծաղկու յեղաւուն
 և ու ծանուացեանց. Հ արանին եղաւ մըցքին ծառ
 կուն և դեկազմնուզ ու ուկանիս աբեղացաւ յիշէ
 տերին. և դրա սեւեա ա թիւթեա ա մերուն

ԱՄ, ձեռ. 1576: Դրազարկ, թ. 54ա:

կամ անվավեր շարականներին նվիրված գրքում նշում է, որ Համամի շարականը երգվել է Դկ ստեղի ձայնեղանակում³²: Կանոնական Շարակնոցում զետեղված Դկ ստեղի բոլոր շարականները ունեն նույնպիսի ճոխ խազային պատկեր, բայց դրանցից ոչ մեկի համար բնորոշ չէ «վերնախաղ-ներքնախաղ-վերնախաղ-բութ» հաջորդականությունը, որը պարբերաբար կրկնվում է Համամի շարականի խազային բնագրերում (տե՛ս, օրինակ, ՄՄ թիվ 1576 ձեռագիրը, թ. 53թ, 54ա): Ամենայն հավանականությամբ, դա Դկ ստեղիի անհատականացված տարբերակ է, որը զուգահեռներ չունի կանոնական, եկեղեցու կողմից պաշտոնապես ընդունված Շարակնոցում:

Թիվ 1576 ձեռագրում գրիշը մի քանի տեղ տառ-խազեր է նշել՝ «շ.» և «ծ.», որոնք ըստ Տնտեսյանի և Կոմիտասի մեկնաբանությունների, ցուցանում են մեղեղու բնույթը կամ տվյալ հատվածի կատարման կերպը: Այսպես, «շ.»-ն կարող է նշանակել «շատ», այսինքն՝ «ավելի ուժեղ», կամ «անուշ», այսինքն՝ «մեղմ», իսկ «ծ.»-ն՝ «ծանր», այսինքն, ավելի դանդաղ և լայնաշունչ³³, բազմաթիվ զարդարանքներով

³² Ամատունի 1911, 15 164:

³³ Տառ-խազերի մասին տե՛ս Տնտեսյան 1933, 48; Կոմի-

(«խաղերով», ինչի մասին վկայում են նաև համապատասխան խազերը): Դա որպես կանոն հատուկ է եղել Մանրուսման գրքերում զետեղված երգերին: Ամեն պարագայում, «Հայր Երկնաւոր» շարականի ուսումնասիրությունը կարող է դեռ նոր բացահայտումների բերել:

Այն գործունեությունը, որը Համամ Արևելցին ծավալել է սաղմոսերգության կարգավորման ուղղությամբ, աներկրա վկայում է, որ նա խորամուխ էր եկեղեցական պաշտոններգության և հոգևոր երգարվեստի հարցերում: Ինչպես միահամուռ հաստատում են իր անձին և գործունեությանը անդրադարձած պատմիչները, նա Սաղմոսների վերջին գոբղաներին հավելել է «Փառք յարութեան քո Տէր» երգվող տունը, և, ինչպես ենթադրել է Վ. Հացունին՝ «...յուրաքանչիւր կանոնի վերջին գուբղային մեծագոյն կարևորութիւն մը տուաւ, ինչ որ արդեն չափով մը ունեին Ե դարէն. և ինք հաւանորէն ծանրացուց անոնց եղանակը»³⁴: Այդպես կոչված «ծանր» եղանակները ներկայացնում են հոգևոր երգարվեստի, ինչպես սաղմոսերգության, այնպես էլ՝ շարականներգության մե-

տաս, 2007, 390; տե՛ս նաև Թահմիջյան 2003, 108–123; Արևշատյան, 2020, 183–185:

³⁴. Հացունի, 1965, 222:

ղեղիապես առավել բարդ և զարդոլորուն ոճով երգվող կտորները: Հայր Շահե Անանյանը արդարացիորեն նկատել է, որ՝ «Ձետին գոբղայք ի մարգարեիցն առեալ» արտահայտությունը մտածել է տալիս սաղմոսերգության հին ավանդական ձեի, այսինքն՝ Սաղմոսների եւ օրիներգությունների՝ նույն գրքի մեջ միատեղման մասին»³⁵: Այսինքն, խոսքն այստեղ հին-կտակարանային Մարգարեական օրինությունների մասին է՝ օրինություններ, որոնք, դատելով գրչագիր մատյանների ճոխ խազավորումներից, ունեցել են վառ արտահայտված մանրակերտ-ծորերգային (մելիզմատիկ)՝ այսինքն, «ծանր» մեղեղիական նկարագիր:

Վերջապես, գրչագիր մատյաններից մեկում պահպանվել է ուշագրավ մի հատված, որը մեջբերել է իր գրքում Ա. Մնացականյանը: Այն վերնագրված է. «Յաղագս մեկնութեան ալելուեայ ասելոյն. Պարտ է դիտել ուսումնասիրաց և բանայսիրաց անձանց, – ասված է գրվածքում, – զի Ը. կանոն սաղմոս՝ աստուածահօր մարգարեին Դաւթի, և ամէն կանոն Է. գոբղայք է և զետին գոբղայք ի մարգարեիցն առեալ մեծ վարժապետն հայոց Համամ Յովհաննէս աւծօղ թագաւորին Աշոտոյ Բագրա-

³⁵Տե՛ ս Շահե արելա Անանյան 2009, 50:

տունոյ, և նա ասել ի վերջ տան սաղմոսացն «Փառք յարութեանն քո տէր» և զայլ ամենայն ըստ պատշաճի տօնին, որ ունի խորհուրդ գութերորդ հանդերձեալ աւուրն, և պարտ է ամենայն կարգաւորաց եկեղեցւոյ կրկին ալելու ասել ի մին տուն սաղմոսին և դիտաւորութիւն սաղմոսացն, որ ասէ զառաջինն ալելուիայ, որ թարգմանի աւրինութիւն ի բարձունս, և միւս ընկերն ասէ ալելուիայ, որ ասի Փառք քեզ աստուած...»³⁶: Այս վկայությունները միանշանակ ապացուցում են, որ Համամ Արևելցին զբաղվել է ոչ միայն պաշտոներգության կարգավորման հարցերով, շարականերգությամբ, այլ նաև իր և մեկնիշ, անդրադարձել է հոգեոր երգարվեստի տեսության և գեղագիտության խնդիրներին:

Սակայն դառնանք վերնագրում նշված երկին: Դա երաժշտական արվեստին նվիրված մի մեկնություն է, որն իր մեջ քաղվածքներ է ներառել արաք հեղինակների նմանատիպ երկերից կամ էլ ամբողջությամբ թարգմանվել է արաբալեզու բնագրից՝ կից հավելումներով և մեկնաբանություններով: Ինչպես նշել է հրատարակիչը. «Այս մեր հրատարակելի փոքրիկ

³⁶Տե՛ ս Մեացականյան 1966, 200. մեջբերումը ըստ ՍՍ, ձեռ. 5138, թ. 249թ:

բայց հետաքրքրական հատուածն արաբացի գրչի մը շարագրած է, որ չէ թէ ընդհանուր կանոն մը կը սահմանէ երաժշտական արուեստին, կամ թէ հին երաժշտականութեան վրայ լիովին ծանօթութիւն կ'ընծայէ, այլ աւելի առանձին անձի մը տեսութիւն է և հարևանցի խորհրդածութիւն։ Իսկ թէ ի մերոց ո՞վ է ատոր թարգմանն, մեզ յայտնի չէ։ բայց նման բառերով և ոճով կը գունուի ուրիշ պատառիկ մ'ալ մեր քերականութեանց մէջ, որ և Համամայ կ'ընծայուի։ <...> Կըրնայ ըլլալ այս հատուածին ալ թարգմանիչն Համամ ըլլայ»³⁷։

Բնագիրն իր բովանդակությամբ և գաղափարական ուղղվածությամբ չափազանց ուշագրավ է։ Բնականաբար, ինչպես և ընդունված է

³⁷ «Բազմավեալի» երապարակման մեջ երատարակչի անունը նշված չէ։ Այնինչ բնագրի երապարակումը օժուված է նաև զուգահեռ ֆրանսերեն փայլուն թարգմանությամբ։ «Համառոտ յերաժշտական արուեստ ի յարապ զրոց», Բազմավեալ, 1875, Դ, էջ 358–359 (այսուհետ՝ Համառոտ... յարապ զրոց)։ Ցավոր, երատարակիչը չի նշել, թէ ս. Ղազարի միմիթարյան մատենադարանի ո ը գրչագրից է արտատպել տվյալ բնագիրը, և ներկայումս խնդիր է նաև այդ բնագրի աղբյուրի ճշտումը ըստ Վենետիկի հայերեն ձեռագրերի մայր ցուցակի հատորների։ Ենթադրում ենք, որ խնդրո առարկա բնագիրը պետք է զետեղված լինի Ժողովածոյ տիպի գրչագիր մատյան-ներից մեկում որպես ուսումնակրթական նյութ։

եղել միջնադարում, նրա բուն նպատակը երաժշտական արվեստի զանազան խնդիրների արծարծումը ծառայեցնելն է, ինչպես նշել է բնագրի հրատարակիչը, «յերաժշտականութենէ միակ պատճառին՝ Աստուծոյ գոյությանը, զոր և կը հաստատէ սուրբ գրոց օրինակներով»³⁸: Բնագրում մեկտեղվել են անտիկ շրջանից հայտնի մի շարք փիլիսոփայական և գեղագիտական ուսմունքներ: Դրանց թվում՝ Պլատոնի ուսմունքը հոգու մասին, երաժշտության հիմքում ընկած թվի և քանակի մասին համապարփակ տիեզերաբանական ուսմունքը, այնուհետև՝ ձայնի կամ հնչյունի և երաժշտական էթոսի մասին ուսմունքները: Վերջինիս էությունը կազմում են երաժշտության՝ մարդու հոգու և ներաշխարհի վրա ներագդելու հատկությունը, ինչն ի զորու է նրա մեջ արթնացնել տարբեր բնույթի տրամադրություններ՝ տիրությունից մինչև բուռն ուրախություն, ընդհուած մինչև ողբալու կամ հոգեպես խաղաղվելու հոգեվիճակների առաջացումը: Այս երկասիրության մեջ արծարծվում է նաև երաժշտության թերապևտիկ ազդեցության գաղափարը, խոսվում այն մասին, թե ինչպես առանց որևէ դեղորայքի օգտագործ-

³⁸Տե՛ս «Բազմավեպ», նշվ. թիվը, էջ 359:

ման՝ հնարավոր է տարբեր հիվանդությունների վրա ազդել կիրառելով այս կամ այն լարի վրա արտաքերվող եղանակները։ Վերջապես, խոսվում է ուրեմն ձայնեղանակներին բնորոշ հատկությունների, բնական տարերքների և դրանց կապի ձայնեղանակների ինքնահատուկ ցուցիչների միջև։ Սա ոչ այլ ինչ է քան անտիկ Հունաստանից ժառանգված և ողջ միջնադարի ընթացքում լայնորեն մեկնաբանված ձայնեղանակների մասին ուսմունքը։ Այն, ինչպես հայտնի է, բազմաթիվ մեկնություններ է ծնել հայ մտածողների երկերում, սկսած Մովսես Քերթողահայր Խորենացուց մինչև Գրիգոր Դպիր Գապասաքայյան³⁹։

Հայ միջնադարյան երաժշտական տեսագեղագիտական բնույթի աղբյուրների համեմատությունը մերձավորարենից և միջինասիական նմանատիպ բովանդակության բնագրերի հետ վկայում է ուշագրավ գուգահեռների և փոխառնչությունների մասին։

Հայտնի է, օրինակ, հայկական եկեղեցական ձայնեղանակների և պարսկական, արաբական և թուրքական երաժշտության ավան-

³⁹ Այդ մասին մանրամասն տես մեր մենագրությունները՝ Արեշտյան 2003; նույնի, 2013; տե՛ս և նաև՝ Arewšatyan 1996–1997a, 339–355; Idem, 1996–1997b, 357–366; Արևշտյան 2000, 510–516; ըստ այս տեսագրությունների մասին:

դական ձայնեղանակների ընդհանուր հիմքն ու համապատասխանությունը: Այդ երևույթին իրենց աշխատություններում անդրադարձել են Կոմիտաս վարդապետը⁴⁰, Ք. Քուշնարյանը⁴¹, Ն. Թահմիզյանը⁴², Լ. Երնջակյանը⁴³ և ուրիշներ:

Հայոց եկեղեցական ձայնեղանակներին նվիրված հոդվածում Կոմիտասը համեմատական կարգով ներկայացրել է հայոց հիմնական ձայնեղանակները և արևելյան ավանդական երաժշտության մեջ առկա դրանց նմանակները.

ԱՃ. Առաջին ձայն – Հեքտիւկեահ

ԱԿ. Առաջին կողմ – Սիկեահ

ԲՃ. Երկրորդ ձայն – Հյուսեյինի

ԲԿ. Աւագ կողմ – Աճեմ

ԳՃ. Երրորդ ձայն – Հիճազ

ԳԿ. Երրորդ կողմ – Սապահ

ԴՃ. Չորրորդ ձայն – Նեվա կամ Իսպահան

ԴԿ. Վերջ ձայն – Բւշշաք⁴⁴

⁴⁰Տե՛ ս Կոմիտաս 2005, 55–75:

⁴¹Կյանք 1958, 219–224.

⁴²Թահմիզյան 1969, 193:

⁴³Երնջակյան 2000, 211–216:

⁴⁴Կոմիտաս 2005, 64–65:

Թահմիզյանը հետազայում ընդարձակել է հայոց ձայնելաննակների և դրանց մերձաարևելյան նմանակների Կոմիտասի առաջ բերած համեմատական տախտակը՝ կազմելով նաև «դարձվածք» տիպի ձայնաեղանակների նմանակների ցանկը.

Աձ դարձվածք – Նեշաբուր, Նեշաբուրեք

Ակ դարձվածք – Բուսելիք

Բձ դարձվածք – Շեհնազ

Բկ դարձվածք – Ֆերահ-Փեզա, Աճեմաշրան

Գձ դարձվածք – Էվիզ կամ Էվիճ, Յուգգալ

Գկ դարձվածք – Բէստէնիզեար

Դձ դարձվածք – Սեգեահ-հիւզզամ

Դկ դարձվածք – Ռաստ⁴⁵

Երաժշտագեղագիտական մտքի զարթոնքը Մերձավոր և Միջին Արևելքում վերաբերվում է Արաբական խալիֆաթի ժամանակաշրջանին: Իսլամի տարածումը անդրադառնում էր նաև երաժշտական արվեստի վրա, սակայն իր ողջ արտաքին անհանդուրժողականու-

⁴⁵ Թահմիզյան 1969, 193:

թյամբ հանդերձ, այն բավականաշափ հակասական բնույթ էր կրում: Իսլամական ավանդույթի համաձայն՝ մարգարեն անձամբ դեմ էր երաժշտությանը՝ դասելով այն զինու օգտագործման, խաղամոլության, պարերի և այլ մեղսալից վայելքների շարքը: Երաժշտությամբ զբաղվելու արգելքն այսպես թե այնպես կանոնակարգվեց իսլամի բոլոր հիմնական ուղղությունների կողմից: Այն ստացավ իր հիմնավորումը մի շարք աստվածաբանական երկերում: Միաժամանակ երաժշտական արվեստի հանդեպ ավելի հանդուրժողական դիրքորոշում ունեցող որոշ հեղինակներ, իրենց ապահովելու նպատակով, նույնպես դիմում էին Սուհամմեդի հեղինակությանը, որն, ըստ ուրիշ ավանդությունների, հանդուրժողականություն է ցուցաբերել երաժշտության հանդեպ⁴⁶: Երաժշտական գործունեության միակ ձևը, որը միանշանակ թույլատրված էր մահմեդական հոգևորականության կողմից, ազանի երգեցողությունն էր (աղոթքի կանչը, իրավերը), որը կատարում է մուէճինը մզկիթի մինարեից, և թիլավը՝ Ղուրանի երգեցիկ ընթերցանությունը:

⁴⁶ Իսլամական աշխարհում երաժշտության դերին վերաբերող բազմակողմանի քննությունը տե՛ ս Shiloah 1995:

Նը⁴⁷: Երաժշտության հանդեպ շարիաթի նման վերաբերմունքը իր դրոշմը դրեց մահմեդական պաշտոներգության վրա, որը (բացի նշված ձևերից) չունի ոչ հոգևոր երգասացություններ, ոչ էլ կրոնական ծեսերի երաժշտական ձևավորում:

Մյուս կողմից, երաժշտությունը կարևոր դեր էր խաղում խորհրդապաշտ սուֆիների ծեսերում: Իբն-ալ-Արաբին, Աբու-Էլ-Շուսեյնը, ադ-Դարալը և ուրիշները պնդում էին, որ երաժշտությունը նպաստում է ճշմարտության, Աստծո հայեցողությանը, այսինքն՝ երաժշտությանը կարևոր նշանակություն էր տրվում մտահայեցման (մեղիտացիայի) ընթացքում:

Սակայն երաժշտական ստեղծագործության վրա խալամական գաղափարախտությամբ դրված սահմանափակումները չխանգարեցին երաժշտական տեսության և գեղագիտության զարգացմանը ինչպես արաբների, այնպես էլ խալամ ընդունած մյուս ժողովուրդների մոտ: Առաջավոր Ասիայի երաժշտության տեսաբանների գեղագիտական հայացքների ձևավորման վրա զգալի ազդեցություն է թողել նրանց ծանոթությունը Հին Հունաստանի

⁴⁷ Դուրանի երգեցիկ ենթերցանության և մուեձինի կանչերի նմուշների ձայնագրությունների հավաքածուն տե՛ս Shiloah 1995, 213–230□

(Արիստոտելի, Արիստոքրականի, Պտղոմեոսի, պյութագորյանների և անտիկ շրջանի մյուս մտածողների) երաժշտատեսական ժառանգությանը, որին արաբական աշխարհը ծանոթացավ ասորական թարգմանական ծավալուն գրականության շնորհիվ: Այդ տեսությունները հիմնականում զարգանում էին ժողովրդական և ժողովրդապրոֆեսիոնալ արվեստի, կենդանի երաժշտական պրակտիկայի, մասնավորապես, մակամաթի կամ մուղամաթի արվեստի (որը ծագել է մոտավորապես X դարում) ընդհանրացման հիման վրա⁴⁸:

Հայ մտածողները, ինչպես հայտնի է, հայորդակցվել էին անտիկ շրջանի փիլիսոփայական ժառանգությանն ավելի վաղ, սկսած V դարից, սուրբ թարգմանիչների՝ Մաշտոցի և Սահակի ավագ և կրտսեր աշակերտների հունարան դպրոցի փայլուն դասի շնորհիվ: Գիտությունների համակարգում երաժշտության տեղի, նրա ճանաչողական և դաստիարակչական նշանակությանը, զգայական-էթիկական մեծ ազդեցությանը վերաբերող անդրադարձներն առկա են արդեն Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» աշխատու-

⁴⁸ Музыкальная эстетика стран Востока 1967 (այսուհետ՝ МЭСВ), 245–258□

թյան մեջ: Այդ գաղափարները, ձայնի և ներդաշնակության հենքի մասին ուսմունքների հետ մեկտեղ, իրենց զարգացումը ստացան հետագա դարերի գիտնականների երկերում⁴⁹: Այդ երկասիրություններում արծարծվող բազմաթիվ հարցերից առանձնանում են երաժշտության և ձայնեղանակների ծագման, բնական տարերքների հետ դրանց կապի, երաժշտության թերապեվտիկ ազդեցությանը վերաբերող խնդիրները, այսինքն՝ համապարփակ, հիմնարար պատկերացումների և հասկացությունների մի շարք՝ ողջ միջնադարյան, ինչպես քրիստոնեական, այնպես էլ՝ իսլամական մշակույթների համար:

Համանման բնորոշ գուգահեռներ են դիտվում ձայնեղանակների մեկնությունների և Առաջավոր Ասիայի մի շարք ականավոր միջնադարյան մտածողների՝ ալ-Ֆարաբիի, Իբն Սինայի, աշ-Շիրազիի, ալ-Ամուլիի և այլոց երաժշտագեղագիտական տրակտատների միջև:

Ելնելով խնդրո առարկա բնագրի վերնագրից («Համառու յերաժշտական արուեստ ի

⁴⁹ Այդ մասին մանրամասն տե՛ ս Տագմիզյան 1977, 104–108, 126–134 □

յարապ գրոց») ենթադրելի է, որ հեղինակի տեսադաշտում եղել են արաք մտածողների երաժշտատեսական և գեղագիտական բովանդակության երկեր: Այդ մասին են վկայում մի շարք արաքերեն բառերն ու եզրույթները, ինչը ևս մի անգամ վկայում է, որ IX–XII դարերում հայերը սկսել էին գործուն կերպով հետաքրքրվել արաք իմաստակերների երկասիրություններով: Իսկ դրանցում քննարկվել և մեկնվել են փիլիսոփայական բազմապիսի տեսություններ, և առաջին հերթին՝ Պլատոնի և Արիստոտելի ուսմունքները: Այդ գործընթացն, անկասկած, դրական ազդեցություն է ունեցել հայ միջնադարյան փիլիսոփայական մտքի վրա, ընդլայնելով նրա ընդգրկումը և հարըստացնելով գիտապաշարը ամենատարբեր բնագավառներում՝ բժշկագիտությունից մինչև երաժշտության տեսություն և գեղագիտություն:

Մեկնության մեջ արծարծված է երաժշտական արվեստի հարցերի մի ընդգրկուն շրջանակ, ինչն ավանդական է եղել միջնադարի նմանատիպ երկերի համար: Այդ հիմնախնդիրների մշակմանը մեծապես նպաստել են այսպես կոչված արևելյան արիստոտելիզմը ներկայացնող արաք իմաստակերները, որոնց գիտական ձեռքբերումները ունեցել են համաշ-

խարիային նշանակություն: Նրանց գիտական հետաքրքրությունների տեսադաշտում եղել են այնպիսի հարցադրումներ, ինչպիսիք են, օրինակ, ի՞նչ է երաժշտությունը, ինչպիսի՞ն է հնչյունի բնությունը, ինչպէ՞ս է այն գոյանում, ի՞նչ տեսակների են բաժանվում հնչյունները, երաժշտության ի՞նչ սեռեր (ժանրեր) են հայտնի, ինչպէ ս է երաժշտությունը ազդում մարդու ներաշխարհի և տրամադրության վրա:

Այդ երկերում հիշատակվում են զանազան երաժշտական գործիքների անվանումներ, խոսվում է քնարի լարերի կամ ձայնեղանակների կապի մասին տարերքների և մարդու մարմնի կենսական հեղուկների հետ և այլն: Այսինքն, խնդիրներ, որոնք շոշափում են գիտութան տարբեր ոլորտներ՝ կենսաբանությունից, մարդակազմությունից, ֆիզիկայից, մասնավորապես, հնչյունաբանությունից (ակուսիկայից) սկսած մինչև աստվածաբանություն և գեղագիտություն:

Բնագիրը վերահրատակելիս, նպատակահարմար գուանք տեքստի պարբերությունները թվագրելու, որպեսզի ավելի հստակ լինի դրանց տարանջատումը և ոյուրին՝ դրանց հետ աշխատելը:

Բնագիրը բացվում է ոչ մեծ ներածականով, որտեղ շարադրվում է երաժշտական ար-

վեստի աստվածատուր լինելու զաղափարը և
նրա հակադրումը իսլամի կրոնական պատ-
կերացումներում կարևոր տեղ գրադեցնող
Նավսի զաղափարին.

1 «Խնդրող եթէ ոք իցէ արհեստի երա-
ժշտականութեան, զիտացէ, զի երաժշտա-
կանութիւն՝ զիւտ մի է և զիր՝ սոուզաբան
խմաստնոցն. և զրութիւն նորա վասն հոգւոց
կենդանեաց է, և ոչ վասն մարմնոց. զի մար-
մինք անհոգիք՝ ոչ ունին մասն ի նմանէ. և
երաժշտականութիւն է արուեստ մի, յօդեալ ի
մարմնականէ և ի հոգևորականէ»⁵⁰:

Առաջին իսկ պարբերություններից մեկում
ասված է.

2 «Արդ պարտ է զիտել թէ վասն է՞ր եղաւ
երաժշտականութիւնս, զի ձայնք և երգք յոլով
ազդումն տան հոգւոյ, և հոգին բաշխէ մարմնոյ:
Զոր օրինակ թէ ոք լինիցի ճարտար, և զիտէ
զբնութիւնս հանգամանս, բաւական է նմա մի
տեսակ յայսմ արուեստէ. և երաժիշտ՝ այն իսկ
է որ հմտանայ արուեստս, և յետ այնորիկ կամ
նիւթեղէն գործեօք երգէ, և կամ ձայնիւ միայն. և
եղանակք են ձայնք կշռեալք զկնի միմեանց. և

⁵⁰Տես «Բազմավեպ» 1875, Դ, էջ 359:

ձայնք են՝ շարժմունք ի ծփելոյ մարմնոյ առ
իրեարս ի յօդոյ»⁵¹:

Ձայնի կամ հնչյունի գոյանալու երևույթը
բացատրված է որպես մարմինների իրար հետ
շփվելու և օդի տատանումների արդյունք, մի
գաղափար, որը անմիջականորեն հղում է
Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստափրու-
թեան» երկի հայտնի դրույթը, թէ «զձայն՝ վի-
րավորութիւն օդոյ»⁵²: Դավիթ Անհաղթն այդ
պնդումով համդես է գալիս որպես նորավառո-
նական փիլիսոփայական դպրոցի բնագիտա-
կան հայացքների ջաթագով, Նիկոմաքոս Գե-
րազացու, Արիստոքրսենի և մյուս ալեքսանդր-
յանների նմանատիպ, մասնավորապես, ա-
կուստիկայի ոլորտին պատկանող գաղափար-
ների հետևորդ:

Համամի մեկնության մեջ հնչյունի գոյա-
նալու երևույթը ներկայացված է այսպես.

7 «Իսկ նշանական է բան՝ գիտել զիօսս և
զպատճառս նորա, և հասողութիւն սորայ ի
լսելիս՝ ի յանօրութենէ օդոյ լինի. և ի շփմանէ
երկուց մարմնոց ընդ իրեարս. զի յորժամ շփին
երկու մարմին ընդ իրեարս, օդոյ յերկոցունց
միջոյ արտաքս ելեալ սրընթաց լինի, և Ճօճեալ

⁵¹ Նույն տեղում, 360:

⁵² Դավիթ Անհաղթ 1980, 75:

ծածանէ զողդ մինչև հասուցանէ ի լսելիսն քե-
լիկոնաձև։ և ի գալն նորա թափանցիկ՝ զորու-
թիւն լսողութեան ընդունի զնա յինքն։ և այս
զօրութիւնս՝ է սքանչելի զօրութեամբն Աստու-
ծոյ, ըստ մարգարէին, թէ Յաւել ինձ տէր ունկն
ի լսել։ և ամենայն բանի զոր լսողութիւնն ըն-
դունի պարտ է զոհութիւն տալ այնմ որ հաս-
տատեաց զլսելիս»⁵³:

Հետաքրքրական է հայ և մերձավորա-
րեւեյան մտածողների երաժշտական զգայա-
կան-էթիկական ազդեցության խնդիրն ար-
ծարծող ասույթների համեմատությունը։ Տեղին
է հիշեցնել Դավիթ Անհաղթի «Սահմանը
իմաստասիրութեան» երկի ժԷ զլիսի հայտնի
հատվածը, որը երաժշտական էթոսի մասին
անտիկ ուսմունքը ցուցանող դասական օրի-
նակ է։ «Եւ պարտ է զիտել, թէ մեծ զօրութիւն
երաժշտականին, պէսպէս կրիւք ըմբռնելով
զիոգին եւ տրամադրելով, որպէս յայտ առնեն
մրմունջք եւ ողբք, աստ ինքեանց տրամադրե-
լով զիոգին։ Որպէս վիպասանեալ է ոմանց
վասն Աղեքսանդրի, թէ ի խրախութեան ելով,
երաժիշտն զպատերազմականն նուազէր
զմատն, եւ նա իսկոյն զինեալ արտաքս դի-
մեաց։ Իսկ դարձեալ երաժշտին զուրախա-

⁵³ Համառոտ... յարապ գրոց, 361:

կանն բախեալ զնուազս, նա անդրէն դարձեալ ի բազմականս ճեմեր»⁵⁴:

Համամ Արևելցին շարադրում է մի պատմություն, որը շատ է հիշեցնում Դավիթ Անհաղթի «Սահմանք»-ում Ալեքսանդր Մակեդոնացու հետ կապված պատումը. «Դարձեալ յայտնի է ի մեջ վերջին իմաստնոցն զի ուն իմաստուն ի սոյն արուեստ՝ առաջի մեծագոյն ումեմն թագաւորի զուրախականն հնչեաց մատն, նոքայ ամենեքեան յակամայ ծիծաղեցան. և փոխեալ զլալական, ամենեքեան լացին. և դարձեալ փոխեաց զերզն, և ամենեքեան նիրհեալ ի քուն մտին. և որ երգերն եթող զնոսա ի քուն և գնաց ի տուն իւր»:

Ի դեպ, նույն ավանդապատումը «Մեկնութիւն տումարի» աշխատության մեջ վերապատմել է նաև Հակոբ Ղրիմեցին (XV դ.), որտեղ Ալեքսանդր Մակեդոնացու՝ ձայնեղանակների հանդեպ շարժած զգայունությունը անանուն երաժիշտը հանդես է գալիս Օրփեոսի անվան տակ կամ որպես նրա անվանակիցը, այդպիսով իրար միահյուսելով երկու տարբեր անտիկ առասպելներ. «Եւ ո՞չ կամի բնաւ մեկնել ի քաղցրորակ ձայնագրութենէ նուազարանացն. զումանս ի ցանկութիւն շարժել, զումանս ի հեշ-

⁵⁴ Դավիթ Անյաղթ 1980, 93:

տութիւն, զոմանս՝ լաց, զոմանս՝ խնդալ <...>, զոմանս՝ քաղցրութիւն, զոմանց՝ ազգ եւ ազինս դարձուցանէ զմիտս, զոմանս՝ անշարժութիւն ի տեղիս իւրեանց, ոմանց՝ ախ, ոմանց՝ վայ, ոմանց՝ կանչ, ոմանց՝ ճիչ <...> ոմանց՝ սզալ, ոմանք նայեն այս կոյս եւ այն կոյս, ոմանք համբուրեն զմիմեանս, իբր թէ ուրախ են այսօր, ոմանք պարս ոմանց բերեն, այլ ոմանք ազգի-ազգի եւ պէս-պէս ձայնս ածեն ի հնչմանէ նուազարանացն: Եւ տե՛ս զայս ի հոչակատր երաժշտապետն Աղեքսանդրի յՕրփեւս, զի ո՛չ միայն բանական, այլ եւ անբան գազանքն խայտային եւ խնդային, եւ ի խաղս ելանէին յառաջի արքային, յորժամ նուազեր յՕրփեւս: Եւ յաւուր միում, յորժամ արքայ ի խրախութեան ելով, յՕրփեւս պատերազմականն խաղացոյց զմատն, եւ նա խսկոյն զինեալ արտաքս վազեաց: Իսկ դարձեալ զուրախականն շարժեալ զնուազս, եւ նա անդէն ի բազմականն ձեմեր խրախութեամբ»⁵⁵: Այնպէս որ, միջնադարում սիրված այս առասպելը վերապատմվել է տարբեր հեղինակների աշխատություններում բազմիցս⁵⁶:

⁵⁵ Յակոբ Ղրիմեցի 1987, 199:

⁵⁶ Այդ մասին մանրամասն տե՛ս Արևշատյան 2018, 3, 222–233: Տե՛ս նաև՝ Սուրայյան ԳԸ 2014:

Սովոր Քերթողահոր անունով հայտնի «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» մեկնության մեջ ասված է. «Երկրորդ ձայն՝ զիսմբական աղաչողութիւնս ունի <...>, իսկ կողմն նորին՝ ողբերգական ձայն»⁵⁷: Այնուհետև երրորդ ձայնեղանակը բնորոշվում է որպես «փզական աղաչողութիւն» ունեցող, իսկ նրա կողմ եղանակը՝ որպես «քերկրալից ձայն»: Չորրորդ կողմ եղանակը՝ որպես «ուրախալից ձայն» և այլն⁵⁸:

Հատկանշական է, որ արաք մեծ փիլիսոփա ալ-Քինդին (IX-X դդ.) իր աշխատություններից մեկում փորձում էր ընդհանրություն հաստատել մեղեղիների, գույների և բուրմունքների գեղագիտական ընկալման միջև: Արաք փիլիսոփան գրում էր, որ գոյություն ունի որոշակի համապատասխանություն առանձին գույների և մեղեղիների միջև, նրանց առաջացրած զգացումների տեսակետից: «Նոյնը նկատելի է, – պնդում էր նա, – բուրմունքների դեպքում, որոնք յուրօրինակ «անձայն երաժշտության» տեսակ են ներկայացնում: Որոշ բուրմունքները կարող են արիություն,

⁵⁷Տե՛ ս Արևշատյան 2013, 114:

⁵⁸ «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» մեկնության մասին մանրամասն տե՛ ս Նավոյան, 2013, ԾԱ, 35–59; նույնի, 2020, 157–163: Տե՛ ս նաև Արևշատյան 2013, 114–115; Արևշատյան 2020, 75–82, 204.

մյուսները՝ կիրք, ուրիշները՝ հպարտություն արտահայտել»⁵⁹: Այդպիսի գեղագիտական հայեցակարգը համեմատելի է XV դ. հայ հայտնի մատենագիր Թովմա Մեծոփեցու «ձայնից» մեկնությունների համահավաքում տեղ գտած ուշագրավ մի մեկնության հետ, որը եզակի է իր բովանդակությամբ և արժեքով հայ միջնադարյան գեղագիտական մտքի անդաստանում: Ահա այն.

«Չորս են հայրական սկըսքան, որ անուանեցան համարք ձայնից: Ոչ միով եղանակաւ վարին պաշտամունք ձայնից, այլ բազումս բարին պէսպէս շնորհաւք, որպէս բառաշմունք եւ գոչմունք անասնոց ոչ են միապէս: Նոյնպէս եւ ծաղիկք զանազանք ոչ միատեսակք գոյնս ունին եւ ոչ միապէս հոտ արձակեն: Այլ են կարմիրք, եւ վարդակարմիրք, եւ հրագունակք բազմատեսակք ծաղիկք, զոր Տէր ասէ. Եւ ոչ Սողոմոն յամենայն ի փառս իւր զգեցաւ, որպէս մինն ի նոցանէն (Ղուկ. ԺԲ, 27): Նաեւ ի ներկայնոց ոստոցն անկողաց: Ոմն թուխ եւ ոմն բացատեսիլ ի կարմրէ վարդ եւ ծիրանի, ի կապուտակէ լուրջ եւ կանաչ, ի դեղնէ⁶⁰ կապս

⁵⁹ British Museum, Ms. 2361, fols. 106, 108; Berlin, Ms., We., 1240, fols. 22–24/v. Ալ-Քինդիի երաժշտատեսական և գեղագիտական հայացքների մասին տե՛ս և ՄЭСВ, 240–241.

⁶⁰ Սրբության խորանի տասնափեղլյան վարագույրի

ուաշ(?)⁶¹, որպէս գրեալ է. զծիրանին եւ զմիջնածիրանին եւ զեզրածիրանին, եւ տրփող սիրամարգացն, արծաթզաւծէ ի զոյն ոսկոյ թողում ըզզանազան փայլումն շողաւոր ականց, զոր Պատրոս ասէ. Այլ ճառագայթ է արեգականն եւ այլ փառք է լուսինն, եւ այլ ճաճանչ է աստեղացն առաւել քան զմիմեանց (Ա Կորնթ. ԾԵ, 41), որ են արինակ եղանակաց ձայնից եւ տրոհից գեղգեղմանց <...>»⁶²:

Մեր կարծիքով, տվյալ բնագրում ցայտունորեն արտահայտված գեղագիտական բարձր զգացումի ոգեշնչման աղբյուրներից են Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքի» բնության կատարելությունն ու գեղեցկությունը նկարագրող

գույներն են. հմմր. Ել. ԻԵ, 4; ԻԶ, 1, 31, 33; ԼԱ. 5; ԼԵ, 23, 25:

⁶¹ Տվյալ աղավաղված բառակապակցությունը տարբեր ենթադրությունների տեղիք է տալիս. «կապ» բառի բազմաթիվ իմաստային երանգներից առավել մոտ է թվում ՆԲՀՀ-ում բերվածվածներից վերջինը՝ «որակ համոյ, որպէս թէ կապող լեզուի, տոխապ, փոթոր. փոթոր համ և կապ և հով՝ սերկվիլի» (հ. Ա, էջ 1053): Իսկ «ուաշ»-ը հնարավոր է, որ «ոոշնա, ուաշնա» կամ «ոուշինա» բառերի հետ առնչություն ունենա: Դրանք ՆԲՀՀ-ն բացատրում է որպէս «լուսավոր, պայծառ. քար իրահան որպէս գայլախաղ» (հ. Բ, 682): Հնարավոր է նաև, որ «ոոշնական-ի կրծատ ձևն է ներկայացնում. «ոոշնական» հազվադեպ ածականը, որը ՆԲՀՀ-ն դարձյալ բացատրում է որպէս «լուսաւոր, պայծառ, մաքրափայլ» (հ. Բ, 681):

⁶² ՍՍ, ձեռ. 599, թ. 44թ:

և գովերգող որոշ հատվածներ, օրինակ. «Կատարումն երկրի զարդը բուսոց նորա են, յորժամ ազգի ազգի տունկը բղխեցն, եւ պէսպէս բոյս բողբոջեալ, ծառք ըստ իւրաքնաշիւր մեծապայծառ երփն երփն գունոց. եւ մարզք ըստ իւրաքանչիւր անուշահոտ խոտոցն՝ եւ արմատք ըստ իւրաքանչիւր հահահամն ճաշակաց. <...> Զի ոչ արեգակն էր, որ լուսաւորէր քաղցրահայեացն ճառագայթիք, եւ ոչ լուսին, որ ծագէր ճաճանչազարդ նշողիւք, եւ ոչ աստեղք փայլէին մեծապայծառ վառմամբ»⁶³:

Դժվար է ասել՝ ինքնուրու յն է տվյալ մեկնությունն իր մտահղացմամբ, թե թարգմանված և վերամշակված. թեև անզամ եթե այդպէս եղած լիներ, այդ հանգամանքը բնավ չի նսեմացնում նրա արժեքը հայ միջնադարյան գեղագիտական մտքի տեսանկյունից⁶⁴: Թեև բնագրի վերջին նախադասությունը (ըստ էության՝ հիշատակարանը), որտեղ թվարկված են մեկնությունը կազմած վարդապէտների աղավաղ-

⁶³Տե՛ս Սուլրապյան ԿՌ 1984, 35–36:

⁶⁴Այդ մասին տե՛ս Արևշատյան, 2003, 72–73, 84, 134–135; նույնի, 2013, 106–107, 240–241; Արևշատյան 2020, 104–105, 228–229.

ված հունական անունները՝ «Հմորիոն (Հիմերիոն?) Արմերոյ, Արիադիզէս (Արիստիդէս?) և Փրոգէս՝ այս Դ (հավանաբար պետք է լիներ Գ) վարդապետս կազմեցին զմեկնութիւն ձայնից», տեղիք է տալիս հարցին մոտենալու նաև այլ կերպ:

XIII–XIV դդ. հայտնի փիլիսոփա աշ-Շիրազին «Թագի մարզարիտը» երկասիրության մեջ երաժշտական հնչյունների հատկությունները բնորոշում է հետևյալ կերպ. «Երաժշտական հնչյուններն ունեն տարբեր հատկություններ և ազդեցության ուժ. նրանք կարող են մարդու մեջ առաջացնել ուրախության կամ վշտի տրամադրություն, քաջություն, առատաձեռնություն և այլն»⁶⁵: Նուրահեղիին Արդուրահման Զամին (XV դ.) իր «Երաժշտության մասին տրակտատում» կանգ է առել այդ հարցի վրա ավելի մանրամասնորեն. «Գիտցի բ, որ տասներկու մակամներից յուրաքանչյուրն ունի իր հատուկ ներազդեցությունը, բացի բոլորի համար ընդհանուր՝ հաճույք պատճառելու հատկությունից: Այսպէս, ուշաքը, նևան և բուսալիկը գրգռում են ուժն ու քաջությունը: Միաժամանակ ռաստը, իրաքը և իսֆահանին պիտանի են ուրախության և բերկրանքի առա-

⁶⁵Տե՛ ս ՄЭСВ, с. 295.

ջացման համար: Բազրութքը, զիրաֆքյանդն ու զանգուլեն տիսրություն և թախիծ են առաջացնում»⁶⁶:

Համեմատության համար դիտարկենք հայ միջնադարյան մատենագրության մեջ պահպանված ձայների կամ ձայնեղանակների գյուտին նվիրված հնագույն գրվածքներից մեկը, որի խորագիրն է՝ «Քանի ձայնք են գոյից».

«Ստեփանոս երաժիշտ ԻԶ բաժանեաց. բառաչել, պոռչել, պապչել, բչել, մնչել, կոռչել, գոչել, մոնչել, մոնչել, բըրչել, մոմոալ, ճչել, կանչել, գոզահել, վընչել, գոռոչել, հաչել, հնչել, կառաջել, խրիսնջել, կաղկանձել, վակել, ոռնալ, կարկաջել, սուլալ, սըսուել: Եւ շինեաց գործիք ԻԶ առանձինք, աղիեաւք, եւ երգէին նորոք: Եւ Թիմզիանոս Թեզբացի [լ]առաջիքն շինեաց [գործի] եւ ԻԶ աղի: Յետ սորա Թեովնաս՝ այլակերպ յօրիներ գործի, որ զամենայն կենդանեաց ձայն նովաւ երգէին:

Յետ սորա Սիներգէս արար զԱռաջին ձայն՝ ի հիւսնականանէ գտեալ: Եւ Փոկեղդէս եղբայր՝ զԵրկրորդ ձայնն՝ ի դարբնականէ: Սովեկղիդէս՝ զԵրրորդ ձայնն՝ ի հոսանաց գետոց: Փիպիանոս, քեռորդի սոցա, զՉորրորդ ձանն ի ծփանաց ծովու: Քիւնոսփիենէս՝ հմուտ

⁶⁶Նոյն տեղում:

ձայնից գազանաց եւ թոշնոց, զատուցանէ զկողմն Առաջի ձայնէն: Աքիլես՝ զկողմ Երկրորդ: Եւնիմէս՝ զՉորրորդ ձայն: Արքեղայոս մաքրեաց զամենայն, որ ուսաւ ի ծովային կենդանեաց: Եւ Թեոփիլեանք ումանք արարին ստեղունս չորս, եւ եղեւ ԺԲ ձայն՝ ի փառս Աստուծոյ»⁶⁷:

Ակներև է տվյալ բնագրի հունական հիմքը: Այն արտահայտվել է մի շարք հունական անձնանունների առկայությամբ, ինչպես, օրինակ, Սոփեկղիդէս, Փոկեղիդէս, Քիւնոսփենէս, Աքիլես, Եւնիմէս, Արքեղայոս և այլն⁶⁸:

Մինչ այժմ բերված օրինակները վկայում են ինչպես հայ, այնպես էլ մերձավորարենյան տեսաբանների համար ընդհանուր անտիկ գեղագիտական հայեցակարգերի, մասնավորապես, երաժշտական էթոսի մասին ուսմունքի որոշիչ ազդեցության մասին: Հատկանշական է, որ երկու դեպքում էլ միջնադարյան հեղինակները, հիմնվելով, ըստ երևույթին, նույն աղբյուրների վրա, հաճախ մեջբերում են կեղծ Արիստոտելին, վերապատմում միջնադարում լայն կենցաղավարում ունեցող Օրփեոսի, Պյու-

⁶⁷Տե՛ ս Արևշատյան 2003, 92–93; նույնի, 2013, 186–187:

⁶⁸Այդ մասին ավելի մանրամասն տե՛ ս Արևշատյան, 2013, 47–51:

թագորասի, Պլատոնի, Ալեքսանդր Մակեդոնացու, մոնխորդի, բարբառի և այլ երաժշտական գործիքների ստեղծման մասին պատմող առասպելները:

Վերջապես, պակաս հատկանշական չեն միջնադարյան գիտնականների ասույթները երաժշտության թերապևտիկ ազդեցության և տարերքների հետ ձայնեղանակների ունեցած կապի վերաբերյալ⁶⁹:

Հայ հեղինակների աշխատություններում նկատելի են ինչպես անտիկ ավանդույթի ազդեցությունը, այնպես էլ՝ ուղղակի փոխառություններ արաբալեզու բժշկական գրականությունից, որին հայ գիտնականները սկսել էին ծանոթանալ IX-XI դարերի ընթացքում: Փոյտգիացիներից անմիջականորեն ժառանգված՝ հիվանդներին նվազով, երգեցողությամբ և պարերով բուժելու սովորույթը պահպանվել է հայերի մեջ ողջ միջնադարի ընթացքում: XII դարի հայ բժշկապետ Միսիթար Հերացին «Զերմանց միսիթարութիւն» աշխատության մեջ խորհուրդ է տալիս որոշ տենդային հիվանդություններ բուժել գործիքային նվազի և հաճելի եղանակների երգեցողության միջոցով: Նմանատիպ խորհուրդներն առկա են նաև XV դ.

⁶⁹ Այդ մասին տե՛ ս նաև Shiloah 1995, 47–53.

բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպետ» բժշկական ձեռնարկում⁷⁰: Մա վկայում է այն բանի մասին, որ տվյալ ժամանակաշրջանում պարսկա-արաբական բժշկագիտական տրակտատներից ընկալած փորձը մեծապես ազդել է հայ հեղինակների վրա: Նման պարբերություններ կարելի է գտնել նաև Հովհաննես Երգնկացի Պլուզի «Հաւաքումն ի մեկնութեան քերականին» երկասիրության մեջ, որտեղ անդրադառնալով երաժշտության բարերար ազդեցությանը տարբեր հիվանդությունների բուժման գործընթացում, համրագիտակ գիտնականը գրել է. «Այլեւ հոգեկան ցաւոց աւգտակար է, այսինքն՝ տրտմականին, զի ձայն ի բնութիւն անմարմին է եւ հոգի անմարմին: Նաեւ ըստ մասանց հոգւոյն յարմարի տրտմականին, խոհականին կամ ցանկականին»: Այդ կապակցությամբ Երգնկացին որպես օրինակ վերապատմում է հինկտակարանային հայտնի պատմությունը Դավիթ մարգարեի մասին, ով սաղմոսերգությամբ և քնարահարությամբ դուրս էր բերում մոլագարության վիճակից Սավուղ թագավորին. «Յիշեա զիսրտեշագեղ եւ զիոգենուազ մանուկն զԴաւիթ, որ եւ մարգարէ եւ արքայ, որ սաղմոսելովն եւ

⁷⁰Տե՛ս Օվանեսյան 1946, 39–40.

քնարահարութեամբ դիտէր Սաւուղայ»⁷¹: Շառունակելով իր միտքը Հովհաննես Երգնկացին զրել է. «Երգեն եւ առ հիւանդս, զի օգտակար է ի պետս բժշկութեան, որպէս ըմբելիք դեղոց ընդ ճաշակելիսն եւ սա [Երաժշտականն] ընդ լսելիսն. Եւ զի ձայնն անմարմին է եւ մեծ զօրութիւն ունի, և ազգակցութիւն առ հոգին: Եւ սակս այսր պատճառի գտին զձայնական գործիքն իմաստունքն առաջին, զի ուրախացուցիչ է հոգույ եւ ընդունելով հոգի զուրախականն կիրք՝ ներգործէ առ մարմինն. Եւ տրամադրեալ փոխէ զնա յիւրմէ բնութենէն: Եւ որ ստուգութեամբ հմուտ է արուեստիս, կարողանայ երգելովն դիտողութիւն առնել շահի ի հիւանդին: Եւ ցաւեալն եթէ հասու է արուեստս, առաւել շահի ի ձայնիցն»:

«Քարուս-նամեհ» կոչվող XI դարի հայտնի տրակտատը Երաժշտին հասցեազրված ուղղակի խորհուրդներ է պարունակում. «Եթե ունկնդիրը կարմրատակած երես ունի և լիարյուն է, ավելի շատ նվազիք բերկրորդ լարի վրա, եթե գունատ է և մաղձոտ, նվազիք բ հիմնականում վերևինի վրա, եթե նա թուխ է, նիհար և հակված մելամաղձոտությանը, ավելի շատ նվազիք բ երրորդ լարի վրա, իսկ եթե ճերմա-

⁷¹ ՍՍ, ձեռ. 2329, թ. 73բ:

կերես է և գեր, ապա նվազի՛ր հիմնականում «բամմ» լարի վրա: Քանզի այդ լարերը համապատասխանում են մարդկանց չորս խառնք-վածքներին, ինչպես և հույն իմաստունները և երաժշտության տեսաբանները սահմանել են այդ արվեստը ըստ չորս բնավորությունների»⁷²:

Այդ հանձնարարականները գրեթե անփոփոխ երկրորդում է Հովհաննես Երզնկացին իր «Հաւաքումն ի մեկնութեան քերականին» աշխատության մեջ. «Եւ նիւթական գործիք կազմի ի պետս հիւանդաց այսպէս: Հիւանդ, որոյ արիւնն առաւելեալ է, զիտել պարտ է, երէ հակառակ արեանն պղլամն է. առ այն հիւանդին զծանրն արժան է ասեն հարկանել, զի յոյժ օգտակար է: Եւ առաւելեալ մաղասոյ, որ է պղլամ, պարտ է զզիլն հարկանել, որ է սուր, զի արեան բնութեամբն է. և արիւնն հակառակ է մաղասոյ: Եւ յորժամ խարտեշ մաղձն առաւելս, որ է տաք և գէջ, զպամն պարտ է հարկանել, որ է ցուրտ և գէջ»⁷³:

Համամ Արևելցուն վերագրվող մեկնության մեջ անդրադարձ կա նաև երաժշտության տարբեր տեսակներին (սեռերին)՝ ըստ նրանց կենցաղավարման գործառույթի, այսինքն՝

⁷² ՄЭСВ, 285.

⁷³ ՍՍ, ձեռ. 2329, թ. 73ա:

ուազմական, խրախճանքի, հոգևոր՝ եկեղեցում երգելու և աղոթելու համար և այլն.

Յ «Եւ է տեսակ պատերազմի. և է տեսակ հաշտութեան և ուրախութեան: Ունի և այլ բազում մասունս, որպէս ի տաճարս և յեկեղեցիս երգեն՝ վասն լսելի լինելոյ աղօթից: <...> Այլ և երգեն ի հիւանդանոց և ի խելազարեալս՝ վասն առողջութեան նոցին»⁷⁴: Վերջին նախադասությունը դարձյալ անմիջականորեն վերաբերվում է երաժշտության թերապևտիկ ազդեցությանը, ինչն արձանագրվել է դեռևս անտիկ շրջանի բժշկապետերի կողմից⁷⁵:

Ուշագրավ է այն փաստը, որ երաժշտական թերապիայի հարցերը գրավել են Կոմիտաս Վարդապետի սևոռուն ուշադրությունը: Այդ մասին է վկայում նրա վերջին տպագրված հոդվածը՝ «Բժշկութիւն երաժշտութեամբ» վերնագրով⁷⁶, որն ամբողջությամբ հիմնված է Մայր Աթոռ սր. Էջմիածնի թիվ 2329 ձեռագրի տվյալների վրա: Թեև Կոմիտասը չի նշել, որ իր խնդրո առարկան Հովհաննես Պլուտ Երգնկացու «Մեկնութիւն թերականին» աշխատության համապատասխան հատվածներն են, սակայն,

⁷⁴ Համառօտ...յարապ գրոց, էջ 360:

⁷⁵ Այդ մասին տե՛ և Music as Medicine 2000.

⁷⁶ Կոմիտաս 2007թ, 200–204:

ըստ Էռլեյան, հայ Երաժշտական միջնադարագիտությունը հենց նրան է պարտական այդ հատվածների հրատարակության և լուսաբանման համար:

Երաժշտության տարբեր տեսակների ընկալման մասին է խոսվում Համամ Արևելցու երկի հետևյալ պարբերության մեջ.

13 «Արդ յորժամ զիւտ արուեստիս հաստատուն լիցի, և նիւթաւոր գործիք նորա ընդ նոսա միաբանի. հեշտութիւն քաղցրութեան ՚ի ներքո մուծանէ ՚ի հոգին և է ՚ի հակառակ սորին լիցին զոր գործիքն՝ զարշութիւն և զազրութիւն արկանէ ՚ի հոգին. և բնութիւն մարդոյն ընդուստնէ ՚ի նմանէ և ոչ ընդունի զնա»:

Որպես ամենագիտակ և իր նախորդների փորձն ընդհանրացած, պարսկա-արաբական Երաժշտագիտական գրականությանը ի մոտո ծանոթ զիւնական՝ Հովհաննես Երգնկացին չափազանց ուշազրակ զաղափարներ է արտահայտել Երաժշտության տեսության և զեղագիտության բնագավառում «Հաւաքումն մեկնութեան քերականի» ձեռնարկում, մասնավորապես, Երաժշտության արտահայտչականության վերաբերյալ, օրինակ.

«Այլև ամենայն այսպիսի պաճուճեալ բան. խոռվական կամ խաղաղական, նման ասացեալ է կամ յառաջնոցն կամ ՚ի մէնջ, որք են

այս. խազմ, վրդով, յոյզ, ամբոխ, աղմուկ, դղբրդումն, բումբիւն, դոփիւն, որոտ, բաբախումն, գանչիւն, կանչիւն և այլք այսպիսոք, որ չկարեն զիրս ստոյգ ասել, դարձեալ քերդեալ կոչի, որ ըստ արուեստին հնչմանն յարմարի նա, որպէս փողք, կնդընդոցք, քնարք, տափիղք, սրինկք, և այսպիսիքս»⁷⁷:

Ուշագրավ մեկնաբանություն է տալիս Համամ Արևելցին ձայնի կամ հնչյունի մասին ուսմունքի կապակցությամբ.

5 «Գիտել պարտ է, զի ձայնք երկու տեսակք են, կենդանական և անկենդան. և անկենդանն դարձեալ յերկու տեսակս բաժանի, ի քնական, և ի նիւթ սորա՝ է որպէս ձայն քարանց, և երկաթոյ. և որպէս որոտ և հողմունք, և որպէս մարմնոյ որք ոչ ունին հոգի. իսկ երկրորդ տեսակն ի նիւթոյ՝ որպէս ձայն տաւդի և փողոյ և քնարի, և որք նման են սոցին: Եւ այսուիկ ձայնքս զանազանութիւն ունին. ի որոց մարմինքն մեծ և պինտ են, ձայնք նոցա պնդագոյնք են. և որոց մարմինքն փոքր և կակուղ են, ձայնք նոցա նուազագոյնք են: Եւ պատկերս յերկուս բաժանի, մինն հարկանել, և այն պատճառաւ երկու մարմնոց լինի, որպէս ձեռն և քար, կամ այլ մարմինք որ յիրեար հարկանին,

⁷⁷ ՍՍ, ձեռ. 2329, թ. 147թ:

որպէս ըդունկն և թմբուկ, և կամ կտընտոց և լար: Եւ երկրորդն՝ որ ի շնչերակաց թոքոց կենդանեաց հազարի, որք վիրաւորեն զօդդ, և ի փողոց եղեգանց, և որք նման սոցին»⁷⁸:

Շարունակելով իր խորհրդացությունները հնչյունների տեսակների և նրանց հատկությունների մասին Համամ Արևելցին զրում է.

14 «Զայն սուր ջերմացուցանէ զիստնուածս, և զթանձրութիւն մրրոյն կակդացուցանէ և անոսրացուցանէ. և ձայն բութ՝ հով է և գեճ. զիստնուածն հովացուցանէ, որչափ ևս առաւել խառնուածն մարդոյն լինի ջերմ և չոր. և ձայն որ լինի միջակ և մուհթատիլ»⁷⁹, զամենայն խառնուած մարդոյն ՚ի տեղի իր պա-

⁷⁸ Տես Համառոտ...յարապ զրոց, 361:

⁷⁹ Մուհթատիլ - արաբերեն բառը նշանակում է «1. հստակ, ուղիղ; 2. համաշափ, համամասն; 3. չափավոր»: Ըստ Վահան Տեր-Ղևոնյանի պարզաբանման՝ «արաբերենի "Այն" հնչյունը, որը արտահայտված է ապարացով, հայերեն կարող է հնչել որպէս Հ, իսկ Տ-ն անշուշտ պետք է հնչել որպէս Դ, մի բան, որ հատուկ է միջին հայերենին և արևմտահայերենին»: Իմ շնորհակալությունն եմ հայտնում Մաշտոցյան Մատենադարանի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Վ. Տեր-Ղևոնյանին այս պարզաբանման համար: Ուստի՝ հետևյալ նախադասության իմաստը, ըստ տրամաբանության, պետք է լինի «...» և ձայն որ լինի միջակ և մուհթատիլ (այսինքն՝ հստակ, չափավոր), զամենայն խառնուած մարդոյն ի տեղի իր պահեսցե»:

հեսցէ հաստատուն. և ձայն ոք ներիակ է միջակին, զամենայն մրուր խառնուածոյն շարժէն պղտորէ. և թէ իմաստուն ոք իցէ հիւանդն, մահքերցէ նմա իբր զմահտարաժամ յանկարծակի:

15 Զայնք միջակը և կշռեալք ըստ արուեստիս՝ զխառնուածս հաւասարէ և զբնութիւնս կակդացուցանէ, և թէ հիւանդ ոք իցէ հոգուվ կամ մարմնով, զտրտմութիւնն բառնայ, և զիհւանդութիւնն փարատէ: Եւ յարուեստէս յայսմանէ բազմութեանց՝ զցաւս յառողջութիւն փոխէ, և զառողջութիւն ի ցաւս, ըստ հոգույ և մարմնոյ»⁸⁰:

Վերջապէս, անդրադառնալով անտիկ երաժշտական տեսության հիմնարար գաղափարների թվի և քանակի կատեգորիաներին, Համամ Արևեցին տալիս է այդ հայեցակարգի զուտ դիալեկտիկական մեկնությունը, ելնելով հակադրություն ների փոխադարձ կապից: Նա ընդգծում է շարժման և դադարի, ողբի և խնդրության, տս դաշափության ներքին բաղկացուցիչների փոխադարձվածությանը, ինչն անմիջական կապ ունի երաժշտական արվեստի հության հետ, շեշտում՝ դրանց անվերջանալիությունը, ինչին «ոչ գոյ վախճան».

16 «Արմատ երաժշտականութեանս հա-

⁸⁰ Համառօտ... յարապ զրոց, 363:

մարք է. որպէս թուոցն՝ ոչ գոյ վախճան, և այս գիւտի և արուեստի ոչ գոյ վախճան. որպէս բանականութեան ոչ է վճար, նոյնպէս ողբոց և խնդրութեամց մասանց սորին ոչ գոյ վճար: Զայն և եղանակը յոդեալ են ‘ի շարժմանէ և ‘ի դադարմանէ. և բանք և ոտանաւորք կշռելիք՝ յոդեալը են նման սոցին, որպէս ոտանաւոր յոդեալ է ‘ի չորից տանց չափաբերութեանց. և որպէս չափեալ բանք յօդեալ են յանուանէ և ‘ի բայէ և ‘ի գործոյ. նոյնպէս ‘ի խնդրութենէ և ողբոյ և ‘ի շաղկապէ սոցին յօդեալ է երաժշտականութիւն. և որպէս ոտանաւորին զիս ու զնա՛, երաժշտականին՝ հա՛յ հա՛յ հա՛յ»⁸¹:

Հեղինակը հաստատում է, որ իր մեկնության հիմնական նպատակը ոչ թե անդրադառնալն էր ողբերին կամ ուրախության երգերին կամ զանազան երաժշտական գործիքների նկարագրությանը, այլ ցուցանելու այդ արվեստի սկզբի առաջին պատճառը, առաջին շարժողին՝ Աստծուն.

17 «Արդ սկիզբն արհեստիս այսորիկ՝ է շարժումն, զի եթէ ոչ ունէր պատճառ առաջին սկզբան արհեստիս այսորիկ, ոչ ունէր կատարելութիւն, այս ինքն է երաժշտականութիւնս. որպէս որ էնն որ է սկիզբն և պատճառ ամե-

⁸¹Նույն տեղում:

նայն գոյութեան Էիցս:

18 Եւ արդ խնդիր մեր այսքան բանիցս և յարհեստէս՝ ոչ էր զի ուսցուք գողքս կամ զխընդութիւնս, կամ զազգի ազգի երգեցողութիւնս կամ զզանազան գործիս արհեստիս այսորիկ սահմանել կամ յիշել. այլ էր պատճառն մեր իմանալ զառաջին շարժողն, այսինքն է Էնն Աստուած. այլ զի ծանիցեն թմբեալ մտօք մարդիկ. իբրև զխրատս ունելով, և այնոքիկ որ ըստ չափոյ պարզեացն Աստուծոյ իմաստունք են, զի ամենայն արհեստս և գործք գուշակք են թէ և Աստուած մի. և ամենայնքս ‘ի նմանէ են յառաջ եկեալ. և ‘ի վերայ այսորիկ’ ոչ լինի ուրացութիւն. քանզի որպէս թիւք առանց միոյն ոչ բաղկանան և ոչ յօդին ընդ միմեանս, և զիր առանց կէտի ոչ գոյանայ. և երաժշտականս առանց առաջին շարժման սկզբան ոչ լինի, նոյնպէս և եակըս առանց միայն Էին ոչ կարեին բաղկանալ: Արդ զիտասցես յամենայն էսս մի ըստ միոցէ ‘ի բոլորս և ‘ի մասնաւրս, եթէ ուղիղ մտօք քննեսցես, դացես զէն, որ է պաճառ եղելութեան սոցին, նոյնպէս և յամենայն արհեստս և ‘ի գործս: Եւ թէ ոք ‘ի խնդիր լիցի քննել և իմանալ զորպիտութիւն առաջին պատճառին որ Էնն է, անկարելի է և անհասանելի քննել և զիտել»⁸²:

⁸²Նույն տեղում, 363–364:

Անցնելով քնարի լարերի ինքնահատուկ առանձահատկություններին և նրանց կապին մարդու մարմնի կենսական հեղուկ նյութերի միջև, Համամ Արևելցին որոշակիորեն մեջբերել է մի հատված արաբալեզու ինչ որ բնագրից.

20 «Արդ բնութիւն սուր ձայնին՝ ունի բնութիւն արեան. և երկրորդ ձայնն՝ որ է սակաւ պակաս քան զսուրն, ունի զբնութիւն խարտեշ մաղձին, որ է սաֆրայն. և երրորդն այլ ևս պակաս է, զսե մաղձին ունի, որ է սավտայն. և չորրորդն՝ որ է բամն՝ ունի զբլզամն: Արդ ՚ի խրատ վարժողաց արհեստիս այսորիկ, զի որը ունին զյաւելուած արեանն, պարտ է զիտել, թէ ո՛ է ներհակ արեանն, և է պլզամն. ապա թէ այսպէս, պարտ է երգել զհակառակ նորին, որ է սուրն, զոր զի լ ասեն: Նոյնպէս որ ոք ունիցի զիրտեշն մաղձն յոլով, որ է սաֆրայն, ոչ է պարտ առաջի նորա երգել զսուրն, զի բնութեամբ ունի զբնութիւն արեան որ է տաք և չոր, և տաքութիւն և չորութիւն առաւելու ՚ի սաֆրայն. արդ որ է հակառակ սորին ցուրտն և գէջն՝ որ է բամն, զայն պարտ է երգել: Արդ զիլն՝ որ է սուրն, ունի զբնութիւն հրոյ, որ է տաք և չոր. և են եղանակք երկուադի որ ունի զսոյն բնութիւն, այս ինքն են տաք և չոր. պարտ է ՚ի մէջ նոցին հաւելով աղի մի, զբամն. և է սա

բնութեամբ ցուրտ և գէջ զսոսա առ միմեանս յօդել և երգել, թէթևացուցանէ զս մաղձն որ է սավտայն:

21 Եւ այս է կարգ բնութեան զոր զտեալ առաջին իմաստնցն. զոր եթէ ոք կամիցի վարժիլ և զիտել զարուեստս զայս, առանց բժշկական դեղոյ և ըմպելոյ՝ կարէ ապաքինել զախտըս՝ զորութեամբ արուեստիս, որպէս արարին բազումք յառաջին ֆիլիստֆայիցն»⁸³:

Այս հատվածը դարձյալ համեմատելի է Հովհաննես Երգնկացի «Քերականի մեկնության» համապատասխան հատվածների հետ, որոնցում ինչպես նախորդ պարբերություններում, ակնհայտորեն երևում են պարսկա-արաբական երաժշտական եզրաքանության ճանաչողությունը և հայ ավանդական երաժշտատեսական եզրույթների հետ դրանք համապատասխանեցնելու միտումը:

Հովհաննես Երգնկացու մոտ կարդում ենք. «Չորեքաղեանն քնար առաւել ցուցանէ զզաւրութիւն արուեստիս, զի ըստ նմանութեան բնութեան մարդոյս կերպարանի, որպէս մարդ ի չորից տարեց, եւ այս գործիք ի չորից լարից, զորս և անուանեն զիլ՝ որ է սուր, եւ պամ, որ է թանձր: Եւ տութա, որ է երկրորդն, եւ սեթա՝

⁸³ Նույն տեղում:

Երրորդն: Եւ արդ համեմատի սուրն արեան, զի շերմ է եւ գեց: Եւ երկրորդն՝ սաֆրային, որ է խարտեղ մաղձն, եւ ջերմն եւ չոր: Եւ երրորդն սուտային, որ և սեւ մաղձն, ցուրտ եւ չոր: Եւ բամն՝ որ է ծանր, պղլամին, որ ասի մաղաս. եւ է ցուրտ և գեց <....> զի ըստ նմանութեան բնութեան մարդոյս կերպարանի, որպէս մարդ ի չորից տարեց էացեալ»⁸⁴:

Ահա մի հատված «Մաքրության եղբայրների ուղերձներ» (X դ.) կոչվող արաբական հայտնի կրոնափիլիստփայական տրակտատից. «Գիտցի ի, ո վ իմ եղբայր, մարմինների խառնուրդը լինում է տարբեր տեսակների, իսկ կենդանիների բնությունը՝ տարբեր սեռերի: Յուրաքանչյուր խառնուրդի և յուրաքանչյուր բնության համապատասխանում է որոշակի ձայնեղանակ կամ մեղեղի (իսկ ոյքանց թիվը հայտնի է լոկ մեծ և ամենակարող Ալլահին)»⁸⁵: Իսկ ուղի լարերի մասին նույն երկասիրության մեջ ասված է հետևյալը. «Երաժշտության գիտությամբ զբաղվող իմաստունները սահմանել են, որ ուղի լարերը չորսն են, ոչ ավել և ոչ պակաս: Այդպիսով, նրանք ցանկանում եին նմանեցնել իրենց ստեղծածը լուսնի տակ կա-

⁸⁴ ՍՄ, ձեռ. 2329, թ. 73ա:

⁸⁵Տե՛ս Յովհաննես Երգնկացի 1983; տե՛ս նաև՝ ՄЭСВ 1967, 268.

տարվող բնական երևոյթներին, ընդօրինակելով Արարչի իմաստությունը: Ահա թե ինչո՞ւ «զիր» լարը նմանվում է կրակի տարերքին, իսկ նրա հնչյունը համապատասխանում է տարին և շոգին. «մասնա» լարը օդի տարերքի նմանակն է, իսկ նրա արտաքերած հնչյունը համապատասխանում է օդի խոնավությանը և փափկությանը. «մասլաս» լարը նմանվում է ջրի տարերքին, իսկ նրա ձայնը համապատասխանում է ջրի խոնավությանն ու սառնությանը. «բամմ» լարը հողի տարերքի նմանակն է և նրա արտաքերած հնչյունը նման է հողի ծանրությանն ու կոպտությանը»⁸⁶:

Ինչպես երևում է մեջբերված բնագրերի համեմատությունից, գուգահեռներն ու փոխառություններն ակնհայտ են: Այդ հանգամանքը հաստատում է նաև ինքը՝ հեղինակը (կամ թարգմանիչն ու մեկնիչը), հղելով հաջորդ պարբերության մեջ այն հանրաճանաչ իմաստասերներին, որոնց աշխատություններից նա օգտվել է իր մեկնությունը կազմելիս, ընդուրում՝ արաք իմաստասերների երկերի միջոցով: Դա ցայտունորեն արտահայտված է Պլատոնի և Արիստոտելի անունների արաբացված ձևերից՝ «Աֆլատոն, Արքստուն».

⁸⁶ ՄЭСВ, 268.

22 «Զի նա որ զայս զիրս սահմանեաց, Ճշգրտիւ ստուգեաց, թէ երկնից և աստեղաց ձայնք գոն, յոյժ գեղեցիկ և համեղ և անօսր եղանակ, քան զոցայն որ ՚ի պէսպէս նիւթական գործիս արուեստիւ լինին: Իսկ Աֆլատոն և Արքաստուն և Փոլումեոս՝ հետևողը նոցին, հակառակին սոցա, և անհնարին ասեն լինել ձայն նոցա»⁸⁷:

Սրան հետևում է Պլատոնի տիեզերաբանական ուսմունքի համառոտ շարադրումը, որը լատինական աշխարհում արևմտակվոպական մի շարք մտածողների մոտ ստացել է harmonia mundi անվանումը: Երկնային ոլորտների ներդաշնակության (гармония небесных сфер) պլատոնական տեսությանը հարող համանման պատկերացումները առկա էին դեռևս Անանիա Շիրակացու «Տիեզերագիտության» մեջ, որտեղ հանճարեղ աստղագետն ու մաթեմատիկոսը, ով գրադվել է նաև երաժշտության տեսության և գեղագիտության հարցերով, գրել է. «...զգայարանքն առաջնոցն սուր էին քան զայժմոց՝ զոր վկայեն բազումք. Կասն որոյ ոչ միայն զարեգականն զնաց կարացին նկատել, այլ եւ զբոլոր լուսաւրչաց կարացին դիտել եւ ճանաչել: Եւ ոչ միայն զորավիսութիւն

⁸⁷ Համառոտ... յարապ զրոց, 365:

գնացիցն՝ այլեւ զինչումն ձայնից նոցա. Եւ ի սոցանէ գոտաւ արուեստ երաժշտականութեան աշխարհի»⁸⁸:

Նմանատիպ զաղափարներ են արտահայտված նաև հաջորդ պարբերություններում, որտեղ Համամ Արևելցին հղում է Պտղումեռսին, որպես տիեզերաբանական տեսության հանրահոչակ հեղինակի. «Եւ ճշմարիտն այս է, թէ ունին ձայն, հոգեւոր է նոցա եղանակն և ոչ մարմնաւոր, առանց կարծեաց. սակաւ ոչ ճանաչի, և մեք ասացաք թէ ամենայն բան որ ոչ ունի ստուգութիւն և օրինակաւ ոչ ճանաչի, արտաքս մերժել ՚ի մեք բանէս. և որ ինչ ճշմարիտ է և յարացուցիւ հաստատի՝ այժմ հետևիմք. քանզի ասէ Փոլումեռս՝ թէ երկինք է մարմին յոյժ մեծ քան զամենայն մարմին. արդ թէ նա ձայն ուներ, խափանէր զամենայն ձայն, և չէ պարտ այսմ լինել. և թէ համարին զձայն նորա իբրև զձայն որոտի կամ շարժման, ոչ է պարտ երկնից այսպիսի ձայն լինել, որպէս այս մարմնոց»:

24 «Եւ թէ ասեմք ունի ձայնս, բայց յոյժ հեռաւորութեամբ միջոցիս ՚ի յօդդ ծորեալ ծածկի, այս հնար է լինել. քանզի ձայն մարդոյ այսպէս

⁸⁸ Անանիա Շիրակացի 1940, 83–84: Այդ մասին տե՛ և նաև՝ Արևշատյան 2013, 81–82:

պարզ և զի յօդդ ոչ գոյն կամ ձև առնու, և այս կարելի է: Եւ այլազգ ասեմ՝ զի ասացեալ են խմասունք թէ ոչ ինչ է բնաւ ՚ի ստորին աշխարհս, որոյ նմանութիւնն ոչ է ՚ի վերին եթերսդ. արդ թէ ՚ի ստորին վայրս այս գոյն այսպիսի զանազանութիւն եղանակաց զուարթացուցիչ մարդկան, ոչ ինչ է զարմանք թէ լինին և առ երկնային վայրսն»⁸⁹:

Հղելով բոլոր խմասուններին՝ «զամենայն խմասունքն», որոնք միաբան են հաջորդաբար շարադրված մտքին, հեղինակը հետաքրքիր գաղափար է առաջ քաշում՝ աստերի որպես կենդանի և բանական եռթյունների մասին, որոնք օժտված են նաև գեղեցիկ և ներդաշնակ ձայներով.

25 «Քանզի յայս միաբան են ամենայն խմասունք, զի աստեղքդ կենդանիք են և բանաւորք և գործս կամաւ գործեն. թէ ՚ի զանազան կամս ոչ միաբանին, սակայն միաբան են կենդանութեամբն և բանականութեամբն. և այլք ասացին թէ զանցեալն և զիննելոցն զգան, որպես տուել է նոցա յԱստուծոյ: Արդ եթէ զայսան զորութիւնս ունին, պարտ է ունել ուրեմն և ձայն, այլ ևս գեղեցիկ և համեղ քան զներք-

⁸⁹ Համառօտ... յարապ գրոց, 365:

նոցս: Եւ ոչ է պարտ ասել թէ ոչ է նոցա ձայն,
այլ է հնար որպէս ցուցաւ»⁹⁰:

Ամփոփելով երաժշտական արվեստին
նվիրված իր մեկնությունը, հեղինակը կրկին
անդրադառնում է Պլատոնին և Արիստոտելին,
այնուհետև՝ Պյութագորասին որպէս երաժշտ-
տական արվեստի գյուտարարին, ամենայն
հավանականությամբ նկատի ունենալով երա-
ժշտության տեսական հիմքերի, այն է՝ օքեր-
տոնային շարքի և նրա հիմնական հնչունների
հարաբերակցությունների թվային արտահայ-
տության գյուտին, որի շուրջ անգամ առաս-
պելներ են հյուսվել: Ընդ որում անվանում է
Պյութագորասին «առաջին իմաստասեր», ով
«իր ժամանակին գտավ երաժշտության ար-
վեստը և մարմնի ճնշումի և իր բնավորության
խորաթափանցությամբ ի վերուստ ճանաչեց
այս եղանակները, և [լինելով] մտքով կատար-
յալ և խելացի, հանեց սա ինչպես արծաթը
հողից, ինչն անհնար է գտնել այլ կենդանիների
մոտ, բայց [հնարավոր է] միայն մարդկային
հոգու և մտքի համար»:

27 «Քանզի Պիթագոր առաջին իմաստա-
սերն ի յաւուրս իւր եզիտ զարուեստ երաժշտ-
տականութեանս. և նա ճնշութեամբն մարմնոյ

⁹⁰ Նույն տեղում:

և անօրութեամբ խառնուածոյ իւրոյ զեղանակքս զայս ծանեաւ ՚ի վերուստ և հաստատեաց զարուեստս. և կատարեալ մտօք և խելօք որպէս արծաթ ՚ի հողոյ եհան զատ, զոր այլ կենդանեաց անհնար և գտանել, բայց միայն մարդկային հոգւոյ և մտաց»⁹¹:

Հնչյունների ծագման հարցում, Համամը հիշատակում է «այս զրքի թարգմանիչ իմաստաերներին, որոնցից ոմանք ասացին, թէ երկնքից ձայն չի գալիս, բայց թվում է, թէ Պլատոնը և Արիստոտելը այդ չեն ասել, այլ [մեր] մասնավոր կարծիքով կարող ենք հաստատել, որ երկնքում ձայն գոյություն ունի, որի եղանակը շատ զարմանալի և գեղեցիկ է, ավելի քան եղանակավոր արվեստի պեսպես ձայները».

26 «Թարգմանիչք այսմ զրոց իմաստաերք ոմանք ասացին, թէ երկնիցն ոչ է ձայն. բայց թուի թէ Պլատոն և Արիստոտել ոչ ասացին զայս, այլ մասնաւոր կամ յօդեալ կարծեօք, կարեմք ցուցանել թէ զոյ ձայն երկնից. Զարմանալի և քաղցր եղանակ յոյժ, քան զպէսպէս ձայնս ՚ի յարուեստէ եղանակեալ»:

Մեջբերված օրինակները հավաստում են, որ Համամ Արևելցին, ինչպէս և այլ մեր միջ-

⁹¹ Նույն տեղում, 366:

նադարյան հեղինակները, հավանաբար, օգտվել են նույն արաբալեզու աղբյուրներից: Այդպիսի գաղափարներ և ասույթներ առկա են Աբու-Նասր ալ-Ֆարաբիի (IX դ.), Աբու-Ալի իբն Սինայի (XI դ.), Մահմուդ իբն-Մասուդ աշ-Շիրազիի (XIII–XIV դդ.) և արաբ այլ իմաստասերների երկերում, ինչպես նաև «Մաքրության եղբայրների ուղերձներ» և «Քարուս-նամեհ» սուֆիական խորհրդապաշտական կրոնափիլիսոփիայական տրակտատներում⁹²:

Ինչ վերաբերվում է բնագրի հրատարակչի նկատառմանը, թե «...նման բառերով և ոճով կը գտնուի ուրիշ պատառիկ մ'ալ մեր քերականութեանց մէջ, որ և Համամայ կ'ընծայուի»⁹³, հնարավոր է, որ նա նկատի է ունեցել Համամ Արևելցու «Քերականության մեկնության» «Յաղագս վերծանութեան» գլխի հետևյալ պարբերությունները.

«<...> Եւ զդամբանականն»⁹⁴ Եւ բանք սոցա, որպէս ի վերայ Արտաշէսին եւ Դարեկին

⁹² Այդ զուգահեռների և առնչությունների մասին մանրամասն տե՛ս Արևշատյան 2003, 74–85; նույնի, 2013, 108–125; Arevshatyan, 1996–1997, 357–366. Արևշատյան 2001, 39–49; եօ же, 2020, 106–123.

⁹³ Բազմավեպ, 1875, Դ, 359:

⁹⁴ Տե՛ս և Համամայ Արեւելցու Մեկնութիւն քերականին, 253–254: Քառակուսի փակագծով հրատարակիչը սահմանագատել է Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերբո-

դեպք գրեալք եւ զայսպիսի բանքս յընթեռնուլն պարտ է հմտաբար:

Եւ զտաղն քաջոլորակի] Այլ և ի մերոց տալով տեղեկութիւն, զի տաղ ասի Դաւթեան քերդութիւնն յարմարական բառք ողբականացն որ զիրս ձայնիցն ունեին, որպէս ողորակալք իմն յայտ ածել զմիտս տաղին մերախտի ունակութեամբ զգիտս իմաստից քերդողականացն բերելով ի դեմս լաւին եւ անլաւին զտաղն վերա ձայնիւ ոոցական ձայնականաց եւ երգականաց ըստ իւրաքնչիւր պատահման ասացեալ, որպէս <...> Դեբովրային մարգարեական ասացելոցն ի վերայ Սիսարայ արքային, կամ Դաւթին ողբք որ ի վերայ սիրել<ւ>ոյն Յովնաթանայ եւ արքային Սատող ի Գեղբուայ լերինն նզովիւ անդալար բուսովք ի չորինս եւ անանձրեւալք զվայրս առակէ, եւ զտաղն վերառնու քաջոլորակի դիմալք ի դեպս եղելոցն: Եւ այնոսիկ հանգամանք տաղիս ի քերդողաց եւ ի մարգարեականացն բանից:

Եւ զբնարական քերդութիւնն ներդաշնակապէս] (Եւ ունել ասէ զյարմարումն եւ զդաշնակումն ձայնի աղլոյն եւ ոտին յիրսն նման եւ ոչ աւտար): Աղլոյն խորին իմն լարացն որ ի

դական»-ի տողերը: Դրան հետևող տեքստը Համամի մեկնությունն է:

բնութիւնս կրի. Եւ ոտին, որպէս կառուցմամբ զհաստադրութիւն արուեստիցն հիմնաւորելով ի մեզ զոյգ սարադրել ի կարգի զկենդանին եւ զբանականն քնարական քերդութեամբ իմն առնուլ <...>»⁹⁵:

Ամփոփենք վերհիշելով Համամ Արևելցուն Ա. Մնացականյանի տված սպառիչ գնահատականը. «Ռազմական և քաղաքական ականավոր գործիչ Համամ Արևելցին իր այս ստեղծագործությունների միջից մեզ է նայում նաև որպէս բանաստեղծ, երաժիշտ, պատմիչ, Աստվածաշնչի և աստվածաբանական գրականության մեկնիչ, քերական, մանկավարժ, եկեղեցական ժամերգության կանոնավորող: Այս ամսենով նա հայոց Արևելից աշխարհի առաջին դասական մատենագիրն է, նրա խոշոր լուսավորիչներից մեկը»⁹⁶:

Տվյալ բնագիրը համալրում է IX-XIII դարերում արաք հեղինակների երկերից կատարած՝ գիտության տարբեր ոլորտներին վերաբերող հայերեն թարգմանությունների շրջանակը, իր արժանի տեղը գրավելով այնպիսի երկերի շարքում, ինչպիսին է, օրինակ, Հովհաննես Պլուտ Երզնկացու «Ի Տաճկաց իմաստա-

⁹⁵ Տե՛ ս Համամայ Արեւելցւոյ Մեկնութիւն քերականին, 253-254:

⁹⁶ Նույն տեղում, 194:

սիրաց գրոց քաղեալ բանք («Ռասանիլ իխվան ալ-սաֆա») աշխատությունը⁹⁷:

Համամ Արևելցուն վերագրվող «Համառօտ յերաժշտական արուեստէ ի յարապ գրոց» երկը, մեր կարծիքով, արժանի է ամենայն ուշադրության, մանավանդ, որ այն ուշագրավ աղերսներ է պարունակում Հովհաննես Երզնկացի Պլուզի «Մեկնութիւն քերականին» երկում արծարծված երաժշտության տեսության և գեղագիտության հետ առնչվող գաղափարների հետ⁹⁸: Բացառված չէ, որ Հովհաննես Երզնկացին էլ իր հերթին ծանոթ է եղել սույն գրվածքին: Ուստիև այս մեկնությունը հրատարակվում է իբրև Համամի անունով պահպանված մատենագրական մի նմուշ: Այն, անկասկած, գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում տարբեր մասնագիտությունների միջնադարագետների համար և միանշանակ արժանի է գիտական շրջանառության մեջ ընդգրկվելուն:

Իմ երախտագտությունն եմ հայտնում սույն գրքի գիտական խմբագիր՝ Մոսկվայի արվեստաբանության պետական ինստիտուտի առաջատար գիտաշխատող, երաժշտության

⁹⁷ Տես Յովհաննես Երզնկացի 2009:

⁹⁸ Տե՛ ս Թահմիզյան 1983, 124–137:

տեսության բաժնի վարիչ, արվեստագիտության դոկտոր Լևոն Հակոբյանին:

Իմ շնորհակալությունը նաև Մաշտոցյան Մատենադարանի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Վահան Տեր-Ղևոնյանին անհրաժեշտ նյութեր տրամադրելու համար:

Համառոտ յերաժշտական արուեստ ի յարապ գրոց

1 Խնդրող եթէ ոք իցէ արհեստի երաժշտականութեան, զիտասցէ, զի երաժշտականութիւն՝ զիւտ մի է և զիր՝ ստուգաբան իմաստնցն. և գրութիւն նորա վասն հոգւց կենդանեաց է, և ոչ վասն մարմնոց. զի մարմինք անհոգիք՝ ոչ ունին մասն ի նմանէ. և երաժշտականութիւն է արուեստ մի, յօդեալ ի մարմնականէ և ի հոգևորականէ. և զիւտ ողբոց և խընդութեան ի նմանէ: Քանզի ամենայն արուեստք որ ձեռամք մարդկան գործին, նիւթ և տեսակ նոցին մարմնական լինի, բաց յերաժշտականութենէս. որոյ տեղի իւր գոյացութիւն է հոգևոր՝ այս ինքն է լսելիքն. և նշանակք իւր ամենայն՝ հոգևոր են. զի պատճառ է շարժման Նաւսի. և նա է մայր և կշիռ ամենայն չափաւոր խօսից: Քանզի յորժամ բազմանայ ամենայն չափաբերական բանի, նովառ զանազանի ամենայն տեսակ և չափ և կշիռ ոտանաւոր կերպի. և հիմն զիւտից կտընտոցի և վանզի առ սա հայի. և նշանակք նորա յօգիս մարդկան յայտնի են: Որպէս ասեն, թէ յերկուց ոմանց միջի խոռվութիւն էր վասն արեան, և ոչ ոք կարէր համբոյր հաշտութեան ածել զնոսա. և կոչեաց զերկոսին համօրէն ազգակցօք իւրեանց, ետ ուտել

և ըմպել գինի. և յազդել գինոյն՝ բարկութիւն քինոյն յայտնեցաւ ի նոսա. իսկ որ պանծայրն՝ յորժամ ետես զնոսա զայրացեալ. յառաջ եքեր զեղանակաւոր գործիսն զոր պատրաստեալ էր նախ վասն հաշտութեան նոցին. և յորժամ մերձեցաւ ի մէջ երգոցն, յամենեցունց որ անդր կային սպառեցաւ բարկութիւնն, մանաւանդ յերկոցունց արանցն. և նոքա այնչափ խոնարհեալ միմեանց՝ մինչ զի առանց միջնորդի համբուրեցին զմիմեանս. և նմա որ զայս հնարս գործեաց՝ մեծագոյն պատիւս ետուն և գովեցին: Դարձեալ յայտնի է ի մէջ վերջին իմաստնոցն զի ումն իմաստուն ի սոյն արուեստէ՝ առաջի մեծագոյն ումեմն թագաւորի զուրախականն հնչեաց մատն, նոքայ ամենեքեան յակամայ ծիծառեցան. և փոխեալ զլալական, ամենեքեան լացին. և դարձեալ փոխեաց զերգն, և ամենեքեան նիրհեալ ի քուն մտին. և որ երգերն եթող զնոսա ի քուն և գնաց ի տուն իւր:

2 Եւ ասեմք՝ զի ամենայն ազգ ազգի ազգի ունի զերաժշտականութիւն. մարդիկ առանձինն, և կանայք առանձինն. որպէս աւաշ մարդկան, և ողբ կանանց. և մանկունք ի բնութենէ երգեն, որպէս ճիշ և կոիշ. և կամ չեզոքք որ վայեն և եղուկեն:

3 Եւ է տեսակ պատերազմի. և է տեսակ հաշտութեան և ուրախութեան: Ունի և այլ

բազում մասունս, որպէս ի տաճարս և յեկեղեցիս երգեն՝ վասն լսելի լինելոյ աղօթից. և են ապականեալք և մեղատրք՝ որք պատճառաւ սորին ի զղօսումն գան: Այլ և երգեն ի հիւանդանոցս և ի խելագարեալս՝ վասն առողջութեան նոցին:

4 Արդ պարտ է զիտել թէ վասն է՞ր եղաւ երաժշտութիւնս, զի ձայնք և երգք յոլով ազդումն տան հոգւոց, և հոգին բաշխէ մարմնոց: Չոր օրինակ թէ ոք լինիցի ճարտար, և զիտէ զբնութեանն հանգամանս, բաւական է նմա մի տեսակ յայսմ արուեստէ. և երաժիշտ՝ յն իսկ է որ հմտանայ արուեստիս, և յետ այնորիկ կամ նիւթեղէն գործեօք երգէ, և կամ ձայնիւ միայն, և եղանակք են ձայնք կշռեալք զկնի միմեանց. և ձայնք են՝ շարժմունք ի ծփելոյ մարմնոց առ իրեարս ի յօդոյ:

5 Եւ զիտել պարտ է, զի ձայնք երկու տեսակք են, կենդանական և անկենդան. և անկենդանն դարձեալ յերկու տեսակս բաժանի, ի բնական, և նիւթ սորա՝ է որպէս ձայն քարանց, և նիւթ սորա՝ է որպէս ձայն քարանց, և երկաթոյ. և որպէս որոտ և հողմունք, և որպէս մարմնոյ ոք ոչ ունին հոգի. իսկ երկրորդ տեսակն ի նիւթոյ՝ որպէս ձայն տաւլի և փողոյ և քնարի, և ոք նման են սոցին:

6 Եւ կենդանականն դարձեալ յերկուս տե-

սակս բաժանի, ի բանական և յանքան. անքան
է որպէս կենդանեաց՝ որք ոչ ունին զբանակա-
նութիւն, որպէս թոշնոց և չորքոտանեաց. իսկ
բանական՝ որպէս մարդոյ. և բանականն դար-
ձեալ յերկուս տեսակս բաժանի, ի նշանական և
յաննշանական. աննշանական՝ որպէս ծիծա-
ռիլ կամ լալ, կամ ճիչ և կանչ, և այլք նմանք
սոցին:

7 Իսկ նշանական է բան՝ գիտել զիօսս և
զպատճառս նորա, և հասողութիւն սորայ ի
լսելիս՝ ի յանօսրութենէ օդոյ լինի. և ի շփմանէ
երկուց մարմնոց ընդ իրեարս. զի յորժամ շփին
երկու մարմին ընդ իրեարս, օդոյ յերկոցունց
միջոյ արտաքս ելեալ սրբնթաց լինի, և ճօճեալ
ծածանէ զոդդ մինչև հասուցանէ ի լսելիսն
քելիկոնաձև. և ի գալն նորա թափանցիկ՝
զորութիւն լսողութեան ընդունի զնա յինքն. և
այս զօրութիւնս՝ է սքանչելի զօրութեամբն Աս-
տուծոյ, ըստ մարգարէին, թէ Յաւել ինձ տէր
ունկն ի լսել. և ամենայն բանի զոր լսողութիւնն
ընդունի պարտ է զոհութիւն տալ այնմ որ
հաստատեաց զլսելիս:

8 Եւ այսովիկ ձայնքս զանազանութիւն
ունին. ի որոց մարմինքն մեծ և պինտ են, ձայնք
նոցա պնդագոյնք են. և որոց մարմինքն փոքք և
կակուլ են, ձայնք նոցա նուազագոյնք են: Եւ
պատկերս յերկուս բաժանի, մինն հարկանել, և

այն պատճառաւ երկու մարմնոց լինի, որպէս
ձեռն և քար, կամ այլ մարմինք որ յիրեար հար-
կանին, որպէս ըդունկն և թմբուկ, և կամ կտըն-
տոց և լար: Եւ երկրորդն՝ որ ի շնչերակաց
թոքոց կենդանեաց հազագի, որք վիրաւորեն
զօդդ, և ի փողոց եղեգանց, և որք նման սոցին:

9 Եւ են ի կենդանեաց որք ոչ ունին թոքս,
և զգայն հնչի ի նոցանէ, որպէս ի մեղուաց, և ի
մժեխաց և ի նմանեաց սոցա: Թէակտ սոցա ոչ
ասին ձայնք, զի ձայնքն բազմատեսակք են, ի
սրէ և ի բթէ և ի պարոյկէ բաղկացեալ. իսկ
սոցայն միատեսակ է, սուր միայն կամ բութ. և
որպէս ձկանց և այլ կենդանեաց որք ի ջուրս՝
ոչ ունին թոք. քանզի կենդանոյն ձայն ի թոքոյն
յառաջ բերի պարճառաւ օդոյն, որպէս ասա-
ծաք. զի ձայնք մարդկան և կենդանեաց որք
թոք ունին՝ շարժին և դադարին. և որչափ շար-
ժին, ըստ այնմ և դադարին. և ձայն՝ որ զկնի.
միմեանց շարժի և ոչ դադարի, յայտ է, թէ ոչ է
կատարեալ ձայն:

10 Արդ յայտնի եղև զի ոչ գոյ շարժումն, որ
ոչ ունի դադարումն. և մեք որչափ շարժիմք,
այնչափ և դադարիմք. և շարժիլն փոխումն է
տեղտօջէ՝ ի տեղի ժամանակաւ. և հակարակ
նորին՝ դադարումն. վասն զի շարժմունք՝ փո-
փոխսմունք են. իսկ դադարումն՝ կայումն ան-
կարծիք. և սոքա երկոքին՝ ի ժամանակի լինին:

Եւ սուր շարժումն է, որ զտրոհեալ. երկար միջոցս հատանէ զկարձ ժամանակաւ, և յամբ է՝ որ հատանէ զկարձ միջոցս երկար ժամանակաւ. և թէ երկոքին հաւասարք լինին, յայտ է զի ոչ սուրն ճանաչի և ոչ յամրն: Արդ որչափ ժամանակն սակաւէ քան զշարժումն, նմա սուր կոչեն, և որչափ ժամանակն բազում է, զայն յամր կոչեն: Դադարումն՝ կայան է այնմ որ շարժի:

11 Բայց ասեմք թէ եղանակք ըստ քանակութեան յԸ տեսակս բաժանի. երկու տեսակն հաւասար են միմեանց, և յերկոցունց յայսցանէ մին փոքր է և միւսն մեծ, և մինն սուր, և միւսն բութ, մինն արագ և մինն խոշոր, մինն յայտնի և միւսն նուազ: Մեծն իբրև զքու, որ է դահոլ. փոքր իբրև զտապլակ: Այժմն թէ զքուն զոր մեծ ասացաք, նմանեցուցանես՝ ի յորոտն, նա որոտն մեծ լինի և նա փոքր. բայց պարտ է մրօք զանազանել: Եւ զվեցն ևս այսու օրինակաւ ծանիր, և զոցես ի նիւթական գործիս զօրինակ սոցա:

12 Դարձեալ ըստ այլ իմն յեղանակի. Յերկուս տեսակս բաժանի, 'ի կցեալ և 'ի տրոհեալ. տրոհեալ, որպէս թմբկի և կտընտոցի. և կցեալ՝ որպէս փողոյ և այլոց նմանեաց. և այն որ կցեալ է՝ կամ սուր է կամ բութ: Արդ նիւթական գործովք արհեստիս ծանիցես, զի որոյ փօրոքն

նեղ է՝ ձայն նորա սուր է, և որոյ փորոքն ընդարձակ է՝ ձայնն խոշոր է և բամ. և որոյ ծակն մերձ ՚ի տեղի փշմանն իւրոյ է, կարի յոյժ սուր է ձայնն. և որոյ ծակն ՚ի տեղի փշմանն հեռագոյն է, նա ձայն նորա բամ է. և թէ աղիքն հաւասար են ըստ հեստիս հաստատուն լիցի. և հաստութեանն և պնտութեանն և երկայնութեանն, ձայնք նոցա հաւասարք եղիցին. և թէ լարքն մինն ստուար է, և մինն նուրբ, ձայն նոցա այնպէս եղիցի, և միանգամայն որ ինչ բարակ լինի և կակուղ, ձայնք նոցա սուրք եղիցին. և ՚ի սուսա բազում զանազնութիւնք են:

13 Արդ յորժամ զիւտ արուեստիս հաստատուն լիցի, և նիւթատր գործիք նորա ընդ նոսա միաբանի. հեշտութիւն քաղցրութեան ՚ի ներքն մուծանէ ՚ի հոգին և է ՚ի հակառակ սորին լիցին գոր գործիքն՝ զարշութիւն և զազրութիւն արկանէ ի հոգին. և բնութիւն մարդոյն ընդոստնէ ՚ի նմանէ և ոչ ընդունի զնա:

14 Զայն սուր ջերմացուցանէ զխառնուածս, և զթանձրութիւն մրրոյն կակղացուցանէ և անոսրացուցանէ. և ձայն բութ՝ հով է և գեճ. զխառնուածն հովացուցանէ, որչափ ևս առաւել խառնուածն մարդոյն լինի ջերմ և չոր. և ձայն որ լինի միջակ և մուհթատիլ, զամենայն խառնուած մարդոյն ՚ի տեղի իւր պահեսցէ հաստատուն. և ձայն որ ներհակ է միձակին, զամենայն

մրուր խառնուածոյն շարժէն պղտորէ. և թէ իմաստուն ոք իցէ հիւանդն, մահ բերցէ նմա իբր զմահտարաժամ յանկարծակի:

15 Զայնք միջակք և կշռեալք ըստ արուեստիս՝ զիառնուածս հաւասարէ և զբնութիւնս կակդացուցանէ, և թէ հիւանդ ոք իցէ հոգտվ կամ մարմնով, զտրտմութիւնն բառնայ, և զիիւանդութիւնն փարատէ: Եւ յարուեստէս յայսմանէ բազմութեանց՝ զցաւս յառողջութիւն փոխէ, և զառողջութիւն ի ցաւս, ըստ հոգւոյ և մարմնոյ:

16 Արմատ երաժշտականութեանս համարք է. որպէս քուոցն՝ ոչ գոյ վախճան, և այսմ զիւտի և արուեստի ոչ գոյ վախճան. որպէս բանականութեան ոչ է վճար, նոյնպէս ողբոյ և խնդութեամց մասանց տրին ոչ գոյ վճար: Զայն և եղանակք յոդեալ են ‘ի շարժմանէ և ‘ի դադարմանէ. և բանք և ոտանաւորք կշռելիք՝ յոդեալք են նման սոցին, որպէս ոտանաւոր յոդեալ է ‘ի չորից տանց չափաբերութեանց. և որպէս չափեալ բանք յօդեալ են յանուանէ և ‘ի բայէ և ‘ի գործոյ. նոյնպէս ‘ի խնդութենէ և ողբոյ և ‘ի շաղպապէ սոցին յօդեալ է երաժշտականութիւն.. և որպէս ոտանաւորին զիս ու զնա՛, երաժստականին՝ հա՛յ հա՛յ հա՛յ:

17 Արդ սկիզբն արհեստիս այսորիկ՝ է շարժումն, զի եթէ ոչ ուներ պատճառ առաջին

սկզբան արհեստիս այսորիկ, ոչ ունէր կատարելութիւն, այս ինքն է երաժշտականութիւնս. որպէս որ Էնն որ է սկիզբն և պատճառ ամենայն գոյութեան էիցս:

18 Եւ արդ ինդիր մեր այսքան քանիցս և յարհեստէս՝ ոչ էր զի ուսցուք գողքս կամ զիսընդութիւնս, կամ զազգի ազգի երգեցողութիւնս կամ զզանազան գործիս արհեստիս այսորիկ սահմանել կամ յիշել. այլ էր պատճառն մեր իմանալ զառաջին շարժողն, այսինքն է Էնն Աստուած. այլ զի ծանիցեն թմբեալ մտօկ մարդիկ. իբրև զիսրատս ունելով, և այնոքիկ որ ըստ չափոյ պարգևացն Աստուծոյ իմաստունք են, զի ամենայն արհեստս և գործք գուշակք են թէ և Աստուած մի. և ամենայնքս ‘ի նմանէ են յառաջ եկեալ. և ‘ի վերայ այսորիկ’ ոչ լինի ուրացութիւն. քանզի որպէս թիւք առանց միոյն ոչ բարկանան և ոչ յօդին ընդ միմեանս, և զիր առանց կետի ոչ գոյանայ. և երաժշտականս առանց առաջին շարժման սկզբան ոչ լինի, նոյնպէս և եակքս առանեմիայն էին ոչ կարեին բաղկանալ: Արդ զիտասցես յամենայն էսս մի ըստ միոցէ ‘ի բոլորս և ‘ի մասնաւրս, եթէ ուղիղ մտօք քննեսցես, դացես զէն, որ է պատճառ եղելութեան սոցին, նոյնպէս և յամենայն արհեստս և ‘ի գործս: Եւ թէ ոք ‘ի խնդիր լիցի քննել և իմանալ զորայիսութիւն առաջին պատ-

ճառին որ Էնն է, անկարելի է և անհասանելի քննել և գիտել:

19 Քանզի մեք և ոքք նախ քան զմեզ, խորհեցաք պատկերացուցանել զորպիսութիւն բանաւոր հոգւոց մերոց և ձեռնամուխ եղեալ բազում անզամ, ոչ կարացաք գտանել, զի անշափունին գործիք նիւթական եղանակօք բաժանեալ, ոքք մասունքն յանբաւս ելանել, և ոչ ոք կարէ զսոսա 'ի մի եղանակ ժողովել. սոքա խրատեն զայսոսիկ ոքք ձեռնամուխ լինին իմանալ զորպիսութիւնն Աստուծոյ:

20 Արդ բնութիւն սուր ձայնին՝ ունի բնութիւն արեան. և երկրորդ ձայնն՝ որ է սակաւ պակաս քան զսուրն, ունի զբնութիւն խարտեշ մաղձին, որ է սաֆրայն. և երրորդն ու այլ ևս պակաս է, զսև մաղձին ունի, որ է սավտայն. և չորրորդն՝ որ է բամն՝ ունի զբլզամն: Արդ 'ի խրատ վարժողաց արհեստիս այսորիկ, զի ոքք ունին զյաւելուած արեանն, պարտ է գիտել, թէ ո՛ է ներհակ արեանն, և է պլզամն. ապա թէ այսպէս, պարտ է երգել զիակառակ նորին, որ է սուրն, զոր զի լ ասեն: Նոյնպէս որ ոք ունիցի զիստեշն մաղձն յոլով, որ է սաֆրայն, ոչ է պարտ առաջի նորա երգել զսուրն, զի բնութեամբ ունի զբնութիւն արեան որ է տաք և չոր, և տաքութիւն և չորութիւն առաւելու 'ի սաֆրայն. արդ որ է հակառակ սորին ցուրտն և

գէջն՝ որ է բամն, զայն պարտ է երգել: Արդ զիլն՝ որ է սուրն, ունի քնութիւն հրոյ, որ է տաք և չոր. և են եղանակք երկուաղի որ ունի զսոյն բնութիւն, այս ինքն են տաք և չոր. պարտ է 'ի մէջ նոցին հաւելով աղի մի, զբամն. և է սա բնութեամբ ցուրտ և գէջ. զսսա առ միմեանս յօդել և երգել, թեթևացուցանէ զսն մաղձն որ է սավտայն:

21 Եւ այս է կարգ բնութեան զոր գտեալ առաջին իմաստնոցն. զոր եթէ ոք կամիցի վարժիլ և զիտել զարուեստս զայս, առանց բժշկական դեղոյ և ըմպելոյ՝ կարէ ապաքինել զախտըս՝ զորութեամբ արուեստիս, որպէս արարին բազումք յառաջին ֆիլիսոփայիցն:

22 Զի նա որ զայս զիրս սահմանեաց, ճշգրտիւ ստուգեաց, թէ երկնից և աստեղաց ձայնք գոն, յոյժ գելեցիկ և համեղ և անօսր եղանակ, քան զսոցայն որ 'ի պէսպէս նիւթական գործիս արուեստիւ լինին: Իսկ Աֆլատոն և Արլստոն և Փոլօմէոսս՝ հետևող նոցին, հակառակին սոցա, և անհնարին ասեն լինել ձայն նոցա:

23 Եւ ճշմարիտն այս է, թէ ունին ձայն, հոգեւոր է նոցա եղանակն և ոչ մարմնաւոր, առանց կարծեաց. սակաւ ոչ ճանաչի, և մեք ասացաք թէ ամենայն քան որ ոչ ունի ստուգութիւն և օրինակաւ ոչ ճանաչի, արտաքս

մերժել 'ի մեր քանէս. և որ ինչ ճշմարիտ է և յարացուցիւ հաստատի՝ այժմ հետևիմք. Քանզի ասէ Պոլօմէոս՝ թէ երկինք է մարմին յոյժ մեծ քան զամենայն մարմին. արդ թէ նա ձայն ունէր, խափանէր զամենայն ձայն, և չէ պարտ այսմ լինել. և թէ համարին զձայն նորա իբրև զձայն որոտի կամ շարժման, ոչ է պարտ երկնից այսպիսի ձայն լինել, որպէս այս մարմնոց:

24 Եւ թէ ասեմք ունի ձայնս, բայց յոյժ հեռատրութեամբ միջոցիս 'ի յօդդ ծորեալ ծածկի, այս հնար է լինել. քանզի ձայն մարդոյ այսպէս պարզ և զի յօդդ ոչ գոյն կամ ձև առնու, և այս կարելի է: Եւ այլազգ ասեմ՝ զի ասացեալ են իմաստունք թէ ոչ ինչ է բնաւ 'ի ստորին աշխարհս, որոյ նմանութիւնն ոչ է 'ի վերին եթերադ. արդ թէ 'ի ստորին վայրս այս գոն այսպիսի զանազանութիւն եղանակաց գուարթացուցիչ մարդկան, ոչ չինչ է զարմանք թէ լինին և առ երկնային վայրսն:

25 Քանզի յայս միաբան են ամենայն իմաստունք, զի աստեղքդ կենդանիք են և բանաւորք և գործս կամաւ գորեն. թէ 'ի զանազան կամս ոչ միաբանին, սակայն միաբան են կենդանութեամբն և բանականութեամբն. և այլք ասացին թէ զանցեալն և զլինելոցն զգան, որպէս տուել է նոցա յԱստուծոյ: Արդ եթէ զայսքան զորու-

թիւնս ունին, պարտ է ունել ուրեմն և ձայն, այլ ևս գեղեցիկ և համեղ քան զներքնոցս: Եւ ոչ է պարտ ասել թէ ոչ ոչ է նոցա ձայն, այլ է հնար որպէս ցուցաւ:

26 Թարգմանիչք այսմ գրոց իմաստասէրք ումանք ասացին, թէ երկնիցն ոչ է ձայն. բայց թուի թէ Պղատոն և Արիստոտել ոչ ասացին զայս, այլ մասնաւոր կամ յօդեալ կարծեօք, կարեմք ցուցանել թէ գոյ ձայն երկնից. Զարմանալի և քաղցր եղանակ յոյժ, քան զպէսպէս ձայնս 'ի յարուեստէ եղանակեալ:

27 Քանզի Պիթագոր առաջին իմաստասէրն 'ի յաւուրս իւր եզիս զարուեստ երաժշտականութեանս. և նա ճնշութեամբն մարմնոյ և անօսրութեամբ խառնուածոյ իւրոյ գեղանակքս զայս ծանեաւ 'ի վերուստ և հաստատեաց զարուեստս. և կատարեալ մտօք և խելօք որպէս արծաթ 'ի հողոյ եհան զսա, զոր այլ կենդանեաց անհնար և զտանել, բայց միայն մարդկային հոգւոյ և մտաց: Որպէս որք աշխատանօք 'ի հողոյ կղկղեն զոսկի, և կամ ջուր պատառելով զերկիր, վասն կարեաց և պիտանութեան մարդկան. նոյնպէս նոքա, թէ ոչ եր կարևոր և պիտանացու, ոչ էին այնպիսի վաստակօք զարուեստս զայս զտեալ:

28 Եւ բազում շայեկանութիւն լինի հոգւոյ և մարմնոյ յայսմ արուեստէ, որպէս երգեն յեկե-

դեցիս՝ վասն զղօման մեղաց. և յառանձին տեղիս աղօթից վասն գուարթութեան մտաց. Որպէս Դաւիթ երանելի երգեր յաղօթարանին իւրում զտասնաղին և զեօթնաղին. և եղանակաւս այսուիկ մերձեցուցաներ զխօսս իւր առ Աստուած. և Հրեայք զիտակ են բանիցս այսոցիկ, զի ‘ի հիւանդանցս երգին՝ որով հիւանդը սփոփեալ ննջէին և հանգչէին ‘ի ցաւցն: Եւ Որփես քերդողն ասէ. թէ քերականութիւնն է հոգի և պատճառ յօդման բայից և անուանց և բանից. սոյնպէս երաժշտականութիւնն է հոգի չափաւոր տաղից:

29 Երկրորդ պատճառ զիւտի արուեստիս՝ է հաստատութիւն թէ գոյ բանական հոգի. զի այսպիսի արուեստք որ սկսաւ ‘ի բոլորէ և ‘ի մասնաւրէ և սահմանեաց զարուեստս զայս, յայտ է թէ գոյ հոգի, որպէս հոգին Պիթագորի որ եզիտ զսա, և ոչ է պատահումն հոգիք մարդկան, զի պատահումն ոչ կարէ իրս գոյացուցանել:

30 Արդ այն՝ որ եւ զգոյացութիւն մշտնջենաւոր բանական հոգեւորացս, նոյն ինքն բանական հոգւով և մտօք փառաւոր լիցի այժմ և միշտ և յախտեանս. ամէն:

SUMMARY

This study is devoted to the musical-aesthetic treatise *Brief Extracts from Arabic Books on Musical Art* ascribed to the 9th century scholar Hamam Arewelc'i, who is known primarily for his exegetic writings, including *The Commentaries on the Grammar by Dionysius of Thrace*, and the apocryphal sacred hymn-*śarakan* of repentance, composed in the form of nominal acrostic. The published text is remarkable in terms of the study of theories and teachings inherent in the eras of Antiquity and Hellenism and widely commented throughout the Middle Ages. Among them are the doctrine of Plato about the soul, the cosmological theory about the categories of number and quantity underlying musical art, the doctrines of sound and musical ethos. The essence of the latter lies in the capacity of music to influence soul and mood and to generate mental states of different nature. The writing in question touches also on the theory of music's therapeutic influence, telling how, without resorting to any medicine, it is possible to influence certain diseases by using various tunes, extracted from different strings of a musical instrument in one or another mode. Finally, the treatise speaks of the properties of the Octoëchos and its connections with natural elements reflecting the doctrine of echoi inherited from ancient Greece and widely commented on in the Middle Ages, which, as is well known, gave rise to a number of interpretations in the works of

Armenian thinkers up to Grigor Gapasak'alian (second half of the 18th – early 19th century).

Comparison of medieval Armenian sources of musical-theoretical and musical-aesthetic content with similar Arabic-language works of Middle Eastern and Central Asian thinkers of the Middle Ages, such as al-Kindi, al-Farabi, Ibn Sina, Sufi religious and philosophical treatises *The Epistles of the Brothers of Purity* and *Kabus-name*, testifies to remarkable parallels and borrowings, which definitely influenced and expanded the range of problems that were in the field of vision of Armenian thinkers and enriched the musical and aesthetic thought of medieval Armenia.

РЕЗЮМЕ

Данное исследование посвящено музыкально-эстетическому трактату «Краткие извлечения из арабских книг о музыкальном искусстве», приписываемого ученому IX века Амаму Аревелци, известному главным образом своими экзегетическими сочинениями, толкованием «Грамматики» Дионисия Фракийского и апокрифическим покаянным духовным гимном-шараканом в форме именного акrostиха. Публикуемый текст примечателен с точки зрения изучения теорий и учений, присущих эпохам античности и эллинизма, а также широко комментируемых на протяжении всего Средневековья. В их числе – учение Платона о душе, космологическая теория о лежащих в основе музыкального искусства категориях числа и количества, учения о звуке и музыкальном этосе. Сущность последнего состоит в свойстве музыки влиять на душу и настроение человека и порождать различные душевные состояния. В данном сочинении затрагивается также теория терапевтического влияния музыки, повествуется о том, как не прибегая к какому-либо лекарству возможно влиять на те или болезни путем применения различных напевов, извлекаемых на разных струнах музыкального инструмента в том или ином ладу. Наконец, в трактате говорится о характерных свойствах восьми гласов и их связи с природными стихиями, в чём отразилось унаследованное от Ан-

тичности и широко комментируемое в Средневековые учение о гласах, породившее, как известно, ряд толкований в трудах армянских мыслителей вплоть до Григора Гапасакаляна (вторая половина XVIII—начало XIX вв).

Сравнение средневековых армянских источников музыкально-теоретического и музыкально-эстетического содержания с аналогичными арабоязычными сочинениями ближневосточных и среднеазиатских мыслителей Средневековья, такими как аль-Кинди, аль-Фараби, Ибн-Сина, суфийскими религиозно-философскими трактатами «Послания братьев чистоты» и «Кабуснамэ» свидетельствует о примечательных параллелях и заимствованиях, определенно повлиявших и расширивших круг проблем, находившихся в поле зрения армянских мыслителей и обогативших музыкально-эстетическую мысль средневековой Армении.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Զեռագրեր

Ժողովածուներ՝ ՍՄ, 599, (1413-ից
առաջ), Մեծոփականք; 2329, 1298 թ.,
Երգևկա; ԺԳ դ.; 5138, 1853–1854 թթ., Թաւրիկ,
Սալմաստ; 5611, ԺԳ դ.; Շարակնոցներ՝ ձեռ.
1576, 1328 թ., Դրազարկ; 1577, ԺԳ դ.; 1579, 1500
թ.; 1581, ԺԴ դ.; 1582, ԺԸ դ.; 1584, ԺԸ դ.; 1585,
1488 թ.; 1587, 1423 թ.; 1588, 1651 թ.; 1590, 1308
թ.; Ժողովածոյ, Շարակնոց՝ 1591, 1487 թ.; 1601,
1331 թ.; 1603, 1340 թ.; 1604, ԺԴ դ.; 1613, 1576 թ.;
1615, ԺԸ դ.; 1617, 1496 թ.; 1622, 1336 թ.; 1624,
1488 թ.:

Սկզբաղբյուրներ

Անանիա Շիրակացի. Տիեզերագիտութիւն
և տումար, աշխ. Ա. Աբրահամյանի. Երևան,
1940:

Դաւիթ Անյառք. Սահմանք իմաստափ-
րութեան // Երկասիրութիւնք փիլիսոփայա-
կանք, համահավաք քննական քնազիրը և
առաջաբանը Ս.Ս. Արևշատյանի. Երևան, 1980:

Համամայ Արեւելցոյ Մեկնութիւն քերա-
կանին // Աղոնց Ն. Երկեր հինգ հատորով, հ. Գ,

հրատարակության պատրաստեց Պ.Հ. Հովհաննիվանը. Երևան, ԵՊՀ հրատ., 2008, էջ 253-285:

Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. Վենետիկ, տպ. Ա. Ղազարու, 1862:

Միհրար Այրիվանեցի. Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին. Սոսկվա, տպ. Լազարեան Ճեմարանի, 1860:

Յակոբ Դրիմեցի. Տոմարագիտական աշխատություններ. Մեկնութիւն տումարի եւ զինչ ի տումար, աշխ. Զ. Էյնաթյանի. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987:

Յովհաննէս Երգնկացի. Հաւաքումն մեկնութեան քերականի, աշխ. Լ. Խաչերյանի. Լոս Անձելը, 1983:

Յովհաննէս Երգնկացի. Ի տաճկաց իմաստափրաց գրոց քաղեալ բանք («Ռատուլ իխվան ալ-սաֆա»), հրապարակումը, առաջարանը և բառարանը Սեն Արևշատյանի. Երևան, Նաիրի, 2009:

Ստեփանոս Ասողիկ Տարռնեցի. Տիեզերական Պատմութիւն, աշխ. Կարապետ վրդ. Շահնազարեանց. Փարիզ, 1859:

Օգտագործված գրականություն

Ամասունի 1911 – Ամասունի Մ. վրդ. Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ. Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի, 1911:

Անանյան 2009 – Անանյան Շ. արեղա. Համամ Արևելցին՝ մեկնիչ Սուրբ Գրոց // Էջմիածնին, 2009, Ե, էջ 49–58:

Արևշատյան 2003 – Արևշատյան Ա. Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ. Երևան, Կոմիտաս, 2003:

Արևշատյան 2013 – Արևշատյան Ա. Զայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում. Երևան, Գիտություն, 2013:

Արևշատյան 2018 – Արևշատյան Ա. Անտիկ միթոսները և երաժշտական էթոսի մասին ուսմունքը Բարսեղ Կեսարացուն վերագրվող մեկնության մեջ // Պատմաբանասիրական հանդես, 2018, 3, էջ 222–233:

Երնջակյան 2000 – Երնջակյան Լ. Հայ հոգևոր մոնողիաների և արևելյան դասական մեղեղիների փոխառնչությունները // Հայաստանը և քրիստոնյա Արևելքը. Երևան, Գիտություն, 2000, էջ 211–216:

Թահմիզյան 1969 – Թահմիզյան Ն. Կոմիտասը և հայ հոգևոր երգարվետի ուսումնա-

սիրման հարցերը // Կոմիտասական, հ. Ա. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 159–217:

Թահմիզյան 1983 – Թահմիզյան Ն. Հովհաննես Պլուզ Երգնկացին հայ միջնադարյան երաժշտության տեսաբան // Պատմաբանասիրական հանդես, 1983, № 2–3, էջ 124–137.

Կոմիտաս 2005 – Կոմիտաս. Հայոց եկեղեցական եղանակները // Կոմիտաս վարդապետ. Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ երկու գրքով. Գիրք Ա. Երևան, Սարգիս Խաչենց, 2005, էջ 55–75:

Կոմիտաս 2007ա – Կոմիտաս. Հայ եկեղեցական ու ժողովրդական երաժշտութեան յատկանիշները. – Օտար երաժշտութեանց ազդեցութիւնը հայ եկեղեցական եւ աշուղական երաժշտութեան վրայ // Կոմիտաս վարդապետ. Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ երկու գրքով. Գիրք Բ. Երևան, Սարգիս Խաչենց, 2007, էջ 182–194:

Կոմիտաս 2007բ – Կոմիտաս. Բժշկութիւն երաժշտութեամբ // Կոմիտաս վարդապետ. Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ երկու գրքով. Գիրք Բ. Երևան, Սարգիս Խաչենց, 2007, էջ 200–204:

Կոստանեանց 1896 – Կոստանեանց Կ. Համամ Արևելցի. Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռ սր. Էջմիածնի, 1896:

Հացունի 1965 – Հացունի Վ. Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին. Վենետիկ, տպ. Սբ. Ղազարու, 1965:

Մնացականյան 1966 – Մնացականյան Ա. Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966:

Մուրադյան Գ. 2014 – Մուրադյան Գ. Հին հունական առասպելների արձագանքները հայ միջնադարյան մատենագրության մեջ. Երևան, Նաիրի, 2014:

Մուրադյան Կ. 1984 – Մուրադյան Կ. Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք»-ը. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984:

Նավոյան 2013 – Նավոյան Մ. Մովսեսի Քերթողահաւը «Յաղագս կարգաց եկեղեցւոյ բացահայտութիւնք» գլուխքի հեղինակը // Էջմիածին, 2013, ԺԱ, էջ 35–59:

Նավոյան 2020 – Նավոյան Մ. Մովսեսի Քերթողահաւը «Յաղագս կարգաց եկեղեցւոյ բացահայտութիւնք» երկի ժամանակը (հիմքեր և փաստարկներ) // Սեն Արևշատյան 90. Ակադեմիկոս Սեն Արևշատյանի ծննդյան իննունամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի նյութեր (22-23 մայիս, 2019 թ.). Երևան, Մատենադարան, 2020, էջ 157–163:

ՆԲՀՀ 1980 – Նոր Բառզիրք Հայկագեան Լեզուի, հ. Ա, Բ. Երևան, ԵՊՀ հրատ., 1980:

Վարդանյան 2010 – Վարդանյան *Ս. Հայաստանի բժշկության պատմություն հնագույն ժամանակներից մինչև XVIII դարը*. Երևան, Նաիրի, 2010:

Քեռուեան 2008 – Քեռուեան *Յ. Համամ Արեւելցի* // Մատենագիրք Հայոց, հ. Թ. Անթիլիսա, Կալուստ Կիլթենկեան հիմնադրամի հայկական մատենաշար. 2008, էջ 449—554:

Абегян 1975 – *Абегян М.* История древнеармянской литературы. Е.: Изд-во АН Арм. ССР, 1975.

Адонц 1915 – *Адонц Н.* Дионисий Фракийский и армянские толкователи. Петроград: тип. Императорской Академии Наук, 1915.

Аревшатян 2000 – *Аревшатян А.* Армянские средневековые «Толкования на гласы» // Гимнология. Ученые записки Кабинета русской церковной музыки имени протоиерея Дм. Разумовского Московской государственной консерватории им. П.И. Чайковского. Вып. 1, кн. 2. М.: Московская консерватория, 2000. С. 510–516.

Аревшатян 2001 – *Аревшатян А.* Армянские средневековые «Толкования на гласы» и их параллели в ближневосточных музыкальных трактатах // Православная монодия: её богословская, литургическая и эстетическая сущность. Науковій вісник. Вып. 15. Киев, 2001. С. 39–46.

Аревшатян 2020 – *Аревшатян А.* Учение о гласах в средневековой Армении. Е.: Гитутюн, 2020.

Аревшатян С. 1973 – *Аревшатян С.* Формирование философской науки в древней Армении (V–VI вв.). Е.: Изд-во АН Арм. ССР, 1973; Лимуш, 2017.

Григорян 1966 – *Григорян С.* Средневековая философия народов Ближнего и Среднего Востока. М.: Наука, 1966.

Кушнарев 1958 – *Кушнарев Х.* Вопросы истории и теории армянской монодической музыки. Ленинград: Музгиз, 1958.

Майоров 1979 – *Майоров Г.* Формирование средневековой философии. Латинская патристика. М.: Мысль, 1979.

Музыкальная эстетика стран Востока. Под общей редакцией В.П. Шестакова. М.: Музыка, 1967.

Ованисян 1946 – *Ованисян Л.* История медицины в Армении с древнейших времен до наших дней (в 5 частях). Ч. I. Е.: Изд-во Ереванского медицинского института, 1946.

Сагадеев 1961 – *Сагадеев А.* Избранные произведения мыслителей стран Ближнего и Среднего Востока IX–XIV вв. М.: Мысль, 1961.

Соколов 1979 – *Соколов В.* Средневековая философия. М.: Высшая школа, 1979.

Тагмизян 1977 – *Тагмизян Н.* Теория музыки в древней Армении, Е.: Изд-во АН Арм. ССР, 1977.

Mahé, Thomson 1997 – *Mahé J.-P., Thomson R. W.* “Les humeurs et la lyre”, fragments arméniens d’un enseignement médico-musicologique // *Festschrift in Honour of Nina G. Garsoyan*. Atlanta: Scholars Press, 1997. P. 397–416.

Music as Medicine 2000 – Music as Medicine. The History of Music Therapy since Antiquity. Edited by Peregrine Horden. Aldershot: Ashgate, 2000.

Shiloah 1995 – *Shiloah A.* A Music in the World of Islam. Detroit: Wayne State University, 1995.

ԱՆՆԱ ԱՐԵՎԵՏԱՏՅԱՆ

ՀԱՄԱՍ ԱՐԵՎԵԼՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ
«ՀԱՄԱՌՈՅԱ ՅԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏՔ» ԵՐԿԸ

Համակարգչային էջաղբումը՝ Վ. Պապյանի
Կազմի ձեռավորումը՝ Ն. Երկանյանի

ISBN 978-5-8080-1446-6



Հրատ. պատվեր N 1072

Ստորագրված է տպագրության՝ 3.02.2021թ.:

Չափալը՝ 70 x 100 1/32:

6,25 տպագրական մամուլ:

Տպաքանակը՝ 120 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

